

**ՀԱԼԻԳԵ ԷԴԻՓՐ ԵՎ ՀԱՅ  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹՐԲԱՑՈՒՄՆ ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ.  
ՊՐՈՒԼԵՄԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՆՇԱԳԾՈՒՄ<sup>1</sup>**

*Բանայի բաներ՝ Հայոց ցեղասպանություն, Անթուրայի որբանոց, Հալիդե Էդիփ, հայ որբեր, թրքացման քաղաքականություն, զինվորական, «նոր ենիչերիներ», եվզենիկա:*

*«Դուրսը, Խայիտէ Էտիպ կը քայէր, կարծեք երանութեան մէջ ըլլար:  
Կյս կինը տարբեր աշխարհի մէջ ըլլար կը թուէր:  
Սովի, գրկանքի աշխարհին մէջ ապրող միակ երջանիկ արարածը:  
Կէսօրէ ետք երբ որբերը դասարանները կը մտնէին,  
Խայիտէ Էտիպ ալ կը քաշուէր իր յարկաբաժինը:  
Օրին մէկն ալ գրոյց շրջեցաւ թէ Խայիտէ Էտիպ  
որբերու կեանքին մասին կը գրէ: Զրոյցներ կը շրջէին,  
որ մեծ տղաքներուն արհիւնը կը ծծէ:  
Շատ բաներ, հաւատայի թէ անհաւատայի, կը պատմէին:  
Որն էր ճիշդը, որը՝ շինծուն, յայտնի չէր»<sup>2</sup>:*

Հայտնի փաստ է, որ քրիստոնյա մանուկների իսլամացումն Օսմանյան կայսրությունում ունեցել է երկար դարերի պատմություն: Երևույթը տարբեր կտրվածքով ուսումնասիրվել և ուսումնասիրվում է՝ գիտական հանրային մատուցելով նորանոր բացահայտումներ ու շերտեր: Քրիստոնյա երեխաների իսլամացմամբ զբաղվող կայսերական ինստիտուտը հայտնի էր *դևշիրմեի*<sup>3</sup> քրիստոնյաներից վերցվող «արյան հարկի» ձևով, որի հետևանքով պատրաստվում էին ենիչերի զինվորականներ՝ սուլթանին ծառայելու համար, որոնք հայտնի էին իրենց հատուկ դաժանությամբ ու արյունարբու համբավով: Հետաքրքրական է, որ չնայած այն բանին, որ այդ ենիչերիական կորպուսն Օսմանյան կայսրությունում պաշտոնապես (սակայն, գուցե՝ մշակութային իմաստով՝ դեռ ոչ) դադարել էր գործել արդեն սկսած XVIII դարի սկզբից<sup>3</sup>, այդուհանդերձ, քրիստոնյա երեխաների բռնի կրոնափոխությունները չդադարեցին: Ավելի զարգացավ կրոնափոխության ինստիտուտի սոցիալական նշանակությունը, իսկ Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների բռնի իսլամացումն ու թրքացումն իրականացվում էր թե՛ առօրեական ցարքոցրիվ կերպով, և թե՛ պետական վերնախավի ու ծառայողների կողմից՝ հատուկ ընտրելով ու իբրև

1 Հոդվածը ստացվել է 12.09.2020 և ընդունվել է տպագրության 01.10.2020: Սույն ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի տրամադրած 19YR.6F036 ծածկագրով դրամաշնորհի շրջանակում:

2 Գառնիկ Բանեան, *Յուշեր մանկության և որբության* (Անթիլիաս-Լիբանան, տպարան կաթողիկոսության հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992), 209:

3 Տե՛ս օրինակ Արտակ Շաքարյան, «*Արյան հարկը*» *Օսմանյան կայսրությունում. դևշիրմե* (Երևան, Հեղինակային հրատարակություն, 2006), 128:

ստրկական ուժ գործածելով: Երկու դեպքում էլ հատկանշական էր բռնի կրոնափոխումն ու բռնի ամուսնանալը հայ աղջիկների հետ:

Այս շարքում յուրահատուկ ուշադրություն են գրավում թրքական պետական որբանոցները, որտեղ Հայոց ցեղասպանության ժամանակ հավաքվում էին հայ երեխաները՝ մեծամասնություն կազմելով առհասարակ քրիստոնյա երեխաների բազմության մեջ, և անցնում էին թե՛ ինքնության ջնջման, թե՛ հայ ինքնությունը մոռացության պարտադրելով՝ մոսուլմանական ինքնության սերմանման բռնի ճանապարհով: Այսպիսի որբանոցներից էր Ալթուրայի որբանոցը, որի պատմության և գաղափարական տարբեր շերտերին անդրադարձ կկատարվի սույն հոդվածով:

\*\*\*\*

Երիտթուրքական կառավարությունը հայ որբերին ուժացնելու նպատակով որբանոցներ է բացում Հալեպում, Բեյրութում, Ալթուրայում, Մարդինում, Ուրֆայում, Դիարբեքիում, Կեսարիայում, Մալաթիայում, Արմաշում և մի շարք այլ վայրերում: Թուրքական որբանոցներ կամ կրոնափոխությամբ և թրքացմամբ զբաղվող կենտրոններ են հիշատակվում նաև Էնկյուրիում, Արաբկիրում, Ադանայում, Մարաշում, Գաաթեմնինիում, Խառնըում, Խարբերդում, Դորթ-Յոլում, Բողազլյանում, Մեզրեում, Մերաստիայում, Մամսունում և այլուր: Հաճախ հայ երեխաներին տեղից տեղ էին տեղափոխում՝ նույն վայրում պահելով կարճ ժամանակով, որպեսզի հարազատները չկարողանային գտնել նրանց<sup>4</sup>, երեխաներին բաժանում էին թուրք ընտանիքներին, օսմանյան պաշտոնյաներին, կամ էլ վերջիններս անձամբ էին երեխաներին ընտրում ու տանում իրենց հետ<sup>5</sup>:

Հայոց ցեղասպանության ընթացքում երիտթուրքական կուսակցական վերնախավի, կուսակցության կենտրոնական գործիչների ու համակիրների անմիջական ենթակայությամբ գործող իսլամացմամբ ու թրքացմամբ զբաղվող կառույցների գործունեության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են: Այդ որբանոցների, մասնավորապես Ալթուրայի որբանոցի<sup>6</sup> գործունեությանը

4 Հմմտ. Հալեպի փրկության տան սաների ցուցակի՝ No. 1778, No. 1779 թվահամարների պատմությունները Արաբկիրի թրքական որբանոցի մասին, որոնցից երևում է, որ որբերին երկար չէին թողնում մինևույն որբանոցում, երեխաները մնում էին այստեղ մեկ ամիս, հետո տեղափոխվում էին տարբեր գյուղեր:

5 Տե՛ս օրինակ Յովակիմ Յովակիմեան (Արշակունի), *Պատմություն հայկական Պոնտոսի* (Գլխավոր, տպագրություն «Մշակ»-ի, 1967), 524:

6 *Սուրբ Հովսեփի քոլեջ, Ալթուրա* (Collège Saint Joseph, Antoura) – 1834 թ. Լիբանանի Ալթուրա հովտում՝ հիսուսյան միաբանության միսիայի շենքում (կառուցվ. 1773 թ.) հիմնված դպրոց՝ լազարիստ կաթոլիկ, ֆրանսիացի հոգևորականների կողմից: Այն համարվում է Մերձավոր Արևելքի պահպանված ամենահին դպրոցը: Առաջին աշխարհամարտի ընթացքում լազարիստ միաբանները վտարվում են թուրքերի կողմից և քոլեջը վերածում թրքական որբանոցի՝ Ջեմալ փաշայի և Հալիդե Էդիփի ղեկավարության ներքո: Դպրոցի իրական տերերը հետ են վերադառնում աշխարհամարտի ավարտից հետո՝ 1919 թ. գարնանը, երբ նախկինում թրքացվող և ապա՝ Կարմիր խաչի հոգածությանը հանձնված երեխաներին տեղափոխում են տարբեր որբանոցներ՝ Ջբելյ, Դազիր, Անթիլիաս ու Մարզվան: Դպրոցը վերաբացվում է և ցայսօր գործում է իբրև ֆրանսիական կաթոլիկ դպրոց՝ նախադպրոցական (“Maternelle”) և դպրոցական՝ 1-12 դասարաններով. տե՛ս դպրոցի կայքը.

թիրախային կերպով անդրադարձ կատարած հետազոտողներից են Նարինե Մարգարյանը<sup>7</sup> թեմային նվիրված առաջին հայալեզու գիտական հոդվածով, ինչպես նաև թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլը<sup>8</sup>: Նարինե Մարգարյանը հարուստ նյութ է տալիս հայ երեխաներին պետական մակարդակով իսլամացնելու համար հիմք ծառայած պաշտոնական հրամանների, պետական քաղաքականության առանձնահատկությունների, պատմական անցքերի, Անթուրայի որբանոցի օրինակով՝ կիրառվող մանկավարժական մեթոդների, որբերի պատմությունների, որբանոցներում տեղի ունեցող պատիժների, որբերին իրենց հայ ինքնությանը վերադարձնելու քայլերի վերաբերյալ: Սելիմ Դերինգիլի ուսումնասիրության օբյեկտը, ինչպես և մեր պարագայում է, Հալիդե Էդիփն է: Նա իր հոդվածում խոսում է Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների՝ մի խմբից մյուսը բռնի կերպով տեղափոխելու երևույթի մասին, մեկտեղում ցեղասպանագետների կողմից այս հարցի շուրջ արված ուսումնասիրությունները, ներկայացնում Անթուրայի՝ Ջեմալ փաշայի կողմից թրքական որբանոցի վերածվելու պատմությունը: Առանձին-առանձին անդրադառնում է Անթուրայի երեք որբերի հուշագրություններին և դրանց հաճախ հակադրվող Հալիդե Էդիփի խոսքերին, ժամանակակիցների վկայություններին:

Մեծապես արժևորելով և բարձր գնահատելով Նարինե Մարգարյանի և Սելիմ Դերինգիլի հետազոտական աշխատանքը, մենք որոշեցինք մեր լույսն ներդնել թրքացմամբ զբաղվող ինստիտուտների ուսումնասիրման հարցում, այն է՝ սույն հոդվածով կփորձենք միկրոհարցադրումների միջոցով գիտական հանրույթի ուշադրությունը բևեռել Անթուրայի որբանոցի գործունեության որոշ ենթատեքստային գաղափարական կողմերի վրա, առաջարկել տեսակետներ, բացատրությունների փորձեր ու հետագա ուսումնասիրությունների համար հարցադրումներ:

Սույն ուսումնասիրությունը կատարելու դրդապատճառներն ու հիմքերը խընդրահարույց դաշտը նշագծելն ու նշագծմանը հետևող համապատասխան վերլուծություններ կատարելն է: Այսպես, մասնագիտական քննարկումների ընթացքում որոշակիորեն նկատելի է չկողմնորոշվածությունը երիտթուրք աստիճանակարգի հետ առնչվող երկու գործչի և նրանց շփման շրջանակների, գործունեության իրական ուղղվածության ու գաղափարական շեշտերի վերաբերյալ. այդ անձինք են պանթուրիքստ, ֆեմինիստ, գրող, գրագիտուհի, ժամանակակից Թուրքիայում հերոս կնոջ, գաղափարական մարտիկի համբավ ունեցող Հալիդե Էդիփը<sup>9</sup> և նրա երկրորդ

<http://www.college-antoura.edu.lb/> դիտվել է 19.09.2020:

7 Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915 -1918թթ.)», *Յեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 25-43:

8 Selim Deringil, “Your Religion is Worn and Outdated,” at <https://journals.openedition.org/eac/2090>, դիտվել է 20.08.2020:

9 Հալիդե Էդիփ Ադրվար (1884-1964), թուրք արձակագիր, քաղաքական գործիչ, համաթրքականության՝ Թուրանի ստեղծման գաղափարախոս, ազգայնական, կանանց իրավունքների մարտիկ: «Թուրքերի մայրը», ինչպես իրեն հաճախ կոչում են Թուրքիայում, ծնվել է Ստամբուլում, հայրը՝ Մեհմեդ Էդիփը եղել է Աբդուլ Համիդ II-ի քարտուղար-գործավարներից մեկը, մայրը՝ Ֆաթմա Բերդիֆեմ հանըմը, մահացել է, երբ Հալիդեն փոքր է եղել (տե՛ս Հալիդե Էդիփի միակ թոռան՝ Օմեր Սայարի՝ Հիքմեթուլլահ Չեքի Սայարի որդու հարցազրույցը, որտեղ նա ասում է, որ Հալիդեն

ամուսինը՝ պոզիտիվիստ բժիշկ, գիտության փիլիսոփայության գաղափարական մարտիկ համարվող, Իսլամի հանրագիտարանի գլխավոր խմբագիր, մի շարք եվրոպական ամսագրերում տպագրված, մոդեռնիստ Ադնան Ադըվարը<sup>10</sup>: Երբեմն,

---

Իսպանիայից արտաքսված հրեաների սերնդից էր, որոնք իսլամ էին ընդունել, իսկ նրա հայրը՝ Մեհմեդ Էդիբը սուլթանի պալատում՝ գանձարանի պատասխանատուի՝ Ceyb-i Hümayun-ի գործավարն էր. “Bu dünnyadan Halide Edip Adıvar Geçti-1,” <http://www.24saatgazetesi.com/bu-dunyadan-halide-edip-adıvar-geçti-1/>, դիտվել է 02.09.2020): 1893-1901 թթ. կրթություն է ստացել՝ ընդհատումներով թե՛ հաճախելով Պոսի հունական վարժարաններից մեկը՝ սովորելով հունարեն, թե՛ հայրական տանը՝ մասնավոր ուսուցիչներից, թե՛ հաճախելով Ստամբուլի Օրիորդաց Ամերիկյան քոլեջը, որտեղ հատկապես խորացրել է տարբեր լեզուների իմացությունը, և առաջին թուրք օրիորդն է եղել, որ ավարտել է սույն քոլեջը: Հալիդե Էդիբի հայրը հակամիապետական էր և իթթիհադականության ջատագով, նրանց տունը ժամանակի ինտելեկտուալ գործիչների հավաքատեղի էր, և հետագայում էլ այդ գիծը վերաժարժեց Հալիդե Էդիբի: Իր գաղափարների, արտահայտած մտքերի ու մտնեցումների պատճառով 1909 թ. մարտին, երբ հակաիթթիհադական ուժերը գրոհներ են կազմակերպում, Հալիդե Էդիբին ստիպված է լինում իր երկու երեխաների հետ մի որոշ ժամանակ հեռանալ ու թաքնվել Եգիպտոսում: Այս ընթացքում ճանփորդում է Անգլիա՝ հյուրընկալվելով Իզաբել Ֆրայ անունով բրիտանուհու մոտ, ծանոթանալով հասարակաքաղաքական որոշակի ազդեցություն ունեցող անհատների հետ: 1916-1917 թթ. իր քրոջ՝ Նագիյե հանըմի հետ նշանակվել է Դամասկոսի, Բեյրութի, Աթթորայի կառավարական դպրոցների ու որբանոցների վերահսկող՝ Ջեմալ փաշայի ղեկավարության ներքո: Ամուսնացած է եղել իր ուսուցչի՝ մաթեմատիկոս Սալիհ Ջեքի բեյի հետ (1901-1910 թթ.), երկրորդ անգամ՝ բժիշկ Ադնան Ադըվարի հետ (1917-1964 թթ.): Երկրորդ ամուսնու հետ միացել է Աթթորայի ազգայնական շարժմանը, սակայն հանրապետության հռչակումից հետո՝ ընդդիմադիր դիրք է սկսել զբաղեցնել, ստիպված է եղել ապրել Թուրքիայի դուրս՝ ընդհուպ մինչև Աթթորայի մահը: 1950-1954 թթ. եղել է Թուրքիայի ազգային ժողովի անդամ՝ ընտրված լինելով Իզմիր քաղաքից: Թաղված է Ստամբուլի Մերթեզեֆենդի գերեզմանատանը: Հալիդե Էդիբին իր ժամանակի ազդեցիկ դեմքերից էր, որի կարծիքն ու գործը կարևոր էր Օսմանյան ու հետագայում նաև՝ թուրքական հանրապետության համար. նրա ինտելեկտուալ աշխարհն առնչվում էր թե՛ գրականությանը, թե՛ գիտության տարբեր ճյուղերին (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, պատմություն), թե՛ կրոնին, թե՛ արվեստի տարատեսակ ուղղություններին՝ երաժշտության ու թատրոնին (Հալիդե Էդիբի մասին կենսագրական հիմնական տեղեկությունները քաղել ենք նրա կենսագրական, գաղափարախոսական աշխատություններից. *Memoirs of Halide Edib* (New York, London: Century & Co, 1926), *The Turkish Ordeal* (London, 1928), *Conflict of East and West in Turkey* (Delhi: Maktaba Jamia Millia Islamia, 1935), *Turkey Faces West* (New Haven: Yale University Press, 1930):

10 *Արդուլիսաբ Ադնան Ադըվար* (1882-1955), թուրք բժիշկ, քաղաքական գործիչ, գրող և տեսաբան, զբաղվել է գիտության փիլիսոփայությամբ և պատմությամբ, երիտթուրք կուսակցության աջակից, ֆեմինիստական շարժումների առաջին համակիրներից մեկն է եղել Օսմանյան կայսրությունում: Հալիդե Էդիբի երկրորդ ամուսինն է (ամուսնացել են 1917 թ. ապրիլի 17-ին): Ծնվել է Գալիպոլիում, շատ վաղ տարիքում հոր հետ տեղափոխվել է Ստամբուլ, երբ հորը նշանակել են *Բար-ը Մեշիհասթի*՝ շեյխուլ-իսլամի գրասենյակի, փոխնախարար: Սերում է օսմանյան հայտնի գիտնականների ընտանիքից, որն իր արմատները հասցնում էր 17-րդ դարի *Ջելվեթթեյե թարիքասթի*՝ սուֆիական միաբանության, հիմնադիր Ազիզ Մահմուդ Հյուդայի էֆենդիին: Սովորել է Ստամբուլի բժշկական համալսարանում, ապա՝ Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանում (այժմ՝ Բեռլինի Հումբոլդտ համալսարան): Ուսումը կիսատ է թողել ու վերադարձել Ստամբուլ՝ անմիջապես երիտթուրքական հեղափոխությունից հետո: Առաջնակարգ մասնակցություն է ունեցել *Հիլալ-ը Ահմերի*՝ Կարմիր մահիկի աշխատանքներին, եղել գլխավոր գործավարը, Առաջին աշխարհամարտի ընթացքում ստացել մայրի զինվորական կոչում, պատերազմից հետո ընտրվել է *Հիլալ-ը Ահմերի* սոցիալիստիկ նախագահ: Երիտթուրքերի կառավարման վերջին շրջանում նա ընտրվում է Օսմանյան մեջլիսի պատգամավոր, իսկ 1919 թ. քեմալականների կողմից Ստամբուլում իշխանություն հաստատելուց հետո, կնոջ հետ միասին միանում է թուրք ազգայնականների պայքարին: Անկարայում (երբ դեռ Մուստաֆա Քեմալը չէր գրավել ողջ Թուրքիան ու իշխանության կենտրոնը հաստատել էր Անկարայում) նա հաջորդաբար եղել է առողջապահության նախարար, ներքին գործերի նախարար և Թուրքիայի ազգային ժողովի փոխնախագահ: 1926 թ. կնոջ հետ միասին մեղադրվելով Քեմալ Աթթորայի հանդեպ կատարված

նորվազծվում է այն մոտեցումը, որ սույն երկու պատմական անձինք չեն եղել հայերի հանդեպ իրականացվող ցեղասպանական քաղաքականության ջատագով, չեն մասնակցել բռնարարքներին ու հավաճանքներին, այլ, ընդհակառակը, նույնիսկ փրկել են հայ երեխաներին մահվանից: Գիտությունը չի հանդուրժում անորոշություն, առավել ևս դա մերժելի է ցեղասպանագիտական հարցերում ու, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է մարդկանց փրկել-չփրկելու խնդրին: Իսկ սույն պարագայում փրկել-չփրկելու դիսկուրսի առանցքում հայ երեխաներն են, որոնք տարվում էին թրքացման ուղղությամբ աշխատող պետական հովանու ներքո բացված որբանոցներ, և այդու՛ երեխաներին մի խմբից մյուսը տեղափոխելը, դրա փորձը ևս տեղավորվում է Ռաֆայել Լեմկինի մշակած՝ ցեղասպանություն երևույթի սահմանման մեջ<sup>11</sup>:

Սույն հոդվածի շարադրմանը պատրաստվելիս, նյութի սակավության պատճառով, փորձ է արվել գտնել միմյանց կապվող իրադարձությունների թելերը, հաշվի են առնվել ժամանակի ինտելիգենցիայի համար առանցքային ուղղությունները, գիտության հանդեպ պաշտամունքի հասնող՝ ժամանակի ոգին ու պատմափիլիսոփայությունը, ուշօսմանյան էլիտայի միմետիկ՝ եվրոպականը կրկնօրինակող սալոնների ու ակումբների առանձնահատկությունները, դրանց ներսում տիրող կոնցեպտներն ու մշակույթը, նույնիսկ ուշադրությունը կենտրոնացվել է Հալիդե Էդիփի՝ ժամանակակից կինեմատոգրաֆում ներկայացվող կերպարին ու Արևմուտքում նրա հանդեպ եղած վերաբերմունքին<sup>12</sup>:

---

մահափորձի մեղակցության մեջ՝ լքում են Թուրքիան ու տեղափոխվում Եվրոպա: Թուրքիա են վերադառնում Աթաթուրքի մահից հետո, երբ նախագահն Ահմեդ Իսկյուն էր: Աճյունը հանգչում է Ստամբուլի Մերթեզեֆենդի գերեզմանատանը: Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, մենագրությունների, եղել է Իսլամի հանրագիտարանի գլխավոր խմբագիրը, տպագրվել է թուրքական ու եվրոպական մի շարք ամսագրերում, այդ թվում՝ գիտության փիլիսոփայության ու պատմության, արևելյան միստիկ, մարդաբանության երևույթներին առնչվող ամսագրերում (օրինակ՝ *Yeni adam, Belphegor, Isis, Oriens, Oriente Moderno* և այլն): Տե՛ս Hakan Arslanbenzer, “Adnan Adivar: Science historian and liberal politician,” *Daily Sabah*, at <https://www.dailysabah.com/arts/portrait/adnan-adivar-science-historian-and-liberal-politician>, դիտվել է 20.09.2020, նաև՝ M. Cavid Buysun, “Doktor Abdülhak Adnan Adivar,” at <https://core.ac.uk/download/pdf/38327218.pdf>, դիտվել է 20.09.2020:

11 Մանրամասները տե՛ս Էդիտա Գոդյան «Երեխաների բռնի տեղափոխումը որպես ցեղասպանական գործողություն. ձևավորումից դեպի քրեականացում», *Յեղասպանագիտական հանդես* 8, no. 1 (2020), 99-118:

12 Տե՛ս օրինակ հետևյալ գեղարվեստական սերիալը՝ *The Adventures of Young Indiana Jones* [Երիտասարդ Ինդիանա Ջոնսի արկածները] (ԱՄՆ, 1991-1992, ռեժ. Ջորջ Լուկաս), մաս. 17-ում, որը կոչվում է “The Masks of Evil”: Սերիալի ընդհանուր պլոտեային գիծը պտտվում է ամերիկյան էլիտայի ներկայացուցիչ հանդիսացող ընտանիքի գավակի՝ Ինդիանա Ջոնսի շուրջ՝ պատկերելով տարբեր երկրներում հայտնի մարդկանց, գործիչների հետ հանդիպումները, և այդ միջոցով ներկայացնում է տվյալ երկրի պատմության համար ակնառու, որոշակիորեն սովորական գծից շեղվող հասարակական, քաղաքական ու մշակութային երևույթները, հեղափոխական կերպարներն ու դեպքերը: Օրինակ՝ Լև Տոլստոյին, Պաբլո Պիկասոյին, սուֆրաժիստուհիների շարժումը, Առաջին շախարհամարտը, ջազի ու բլյուզի ծնունդը ԱՄՆ-ում, Փարիզի 1919-1920 թթ. խաղաղության գագաթնաժողովը և այլն: Այս շարքում, մասնավորապես, անդրադարձ է կատարվում Հալիդե Էդիփին՝ իբրև մարդասերի, իբրև պատերազմից որբացած այդ թվում՝ հայ, երեխաների փրկող ու խնամող մանկավարժի ու ինտելեկտուալի: 6-8-րդ բույներում Էդիփի կերպարը հետևյալ դերակատարումն ունի. գրկում ու համբուրում է մի աղջնակի, որից հետո Ջոնսին ու նրա հարսնացուին հետևյալն է ասում. «Այնքան ուժեղ փոքրիկ է, նրա համար կարևորն իմանալն է, որ իրեն սիրում են: Ես բերեցի

Բովանդակային ուղեծիրն ընտրելը բավականին բարդ խնդիր էր, քանի որ առկա էր աղբյուրների սակավություն. թրքացմամբ զբաղվող որբանոցներից միայն մեկի՝ Լիբանանում գտնվող Անթուրայի որբանոցի վերաբերյալ է առկա քիչ թե շատ հստակ աղբյուրագիտական ու հուշագրական հիմք, հայտնի են որբանոցի երեք սանի հուշերը՝ մեկը դեռևս չհրատարակված՝ համակարգչային շարվածքով հուշ, երկուսը՝ գրքի տեսքով հրատարակված: Առկա են Հալիդե Էդիբի՝ անգլերեն գրված հուշերը և մի քանի այլ օժանդակ տեքստային հիմքեր ու լուսանկարներ: Միաժամանակ, Հալիդե Էդիբի հուշագրությանը հավատ ընծայելն առնվազն ոչ գիտական կլիներ, քանի որ ուսումնասիրելով այն, մենք արձանագրեցինք դեպքերի ու դեմքերի, ընդ որում, ոչ միայն հայերի հանդեպ դրսևորվող, միակողմանի, սուբյեկտիվ բացասական վերաբերմունք՝ թաթախված մանիպուլատիվ մտքերով ու դիտարկումներով: Եվ հետևաբար, օրինաչափ հարցադրումներն էլ ավելի շատացան ու հատկապես կենտրոնացումը կատարվեց այն խնդրի շուրջ, որ Հալիդե Էդիբի գրագիտուհին՝ յուրահատուկ մտածողության՝ ինտելեկտի, տեր լինելով, ուներ կոռ համակարգված, կիսաճշմարտություններով ու դեպքերի սքողումով առաջնորդվող հստակ գործելաճ՝ հաշվի առնելով իր ժամանակի ու ապագայի լսարանը և հնարավոր զարգացումները, ուստի նրա հուշագրությունը, բացի բազմաթիվ անճշտություններից ու գաղտնի կողմերից, բազմաթիվ ինչո՞ւների, ինչպե՞սների տեղիք է տալիս ու ստիպում կենտրոնանալ մի առանցքային հարցի վրա, թե ինչն է ճշմարտությունը գրածի մեջ, ինչը՝ կիսաճշմարտությունը, և ինչը՝ հորինվածքը: Էդիբի հուշագրության ազնվության ու անաչառության հանդեպ կասկած առաջացավ նաև այն բանից հետո, երբ երկու նախկին հայ որբերի հուշերում Անթուրայի տնօրենուհին ներկայացվում է առնվազն ոչ դրական գույներով, մինչդեռ միմյանցից անկախ գրված նախկին հայ որբերի հուշերի իսկությունն ու հավատարժանությունը հարցեր չեն առաջացնում, քանի որ սահուն կերպով միմյանց լրացնում են, դեպքերի նկարագրության մեջ ճշգրտության աստիճանի շուրջ կասկածների տեղիք չեն տալիս, հնարավորինս անաչառ գիտականության հիմքով համեմատվել են նաև այդ հուշերը, որոնք թեական վերաբերմունքի տեղիք հիմնականում չտվեցին՝ բացառությամբ որոշ ոչ էական, դեպքերի ետուառաջ նկարագրությամբ և մեկ անհամապատասխանությամբ, որ կապված էր Անթուրայի դասարանների չավուշների<sup>13</sup> հայկական անունների հետ<sup>14</sup>:

---

նրան ինձ հետ՝ Սիրիայից: Չգիտեմ՝ նա Թուրքիայից է, թե՞ Հայաստանից: Մա այնքան վախեցած էր և չէր էլ կարողանում խոսել: Կարծես թե նրա ծնողներին սպանել են հենց իր աչքերի առջև: Հիմա դուք տեսնում եք, թե ինչու է պետք վերջ դնել այս սարսափելի պատերազմին»: Կիևում արտացոլում գտած այս խոսքն իր մեջ պարունակում է Հալիդե Էդիբի՝ իր հուշերում արտահայտված մոտեցումները մասնավորապես Հայոց ցեղասպանության հարցի շուրջ: Մա իր հուշերում արտառոց կերպով ջանում է ամենը, սկսած Ադանայի ողջակիզումից, ներկայացնել այլ գույներով. Ադանայի կոտորածն իբրև օսմանյան հին ռեժիմի կողմնակիցների իրականացրած, հայկական կուսակցությունների՝ սեփական ժողովրդին նահատակելու և ուշադրություն գրավելու սպանող (տե՛ս Edib, *Memoirs of Halide Edib*, 283-284), իսկ Հայոց ցեղասպանությունն իբրև երկուստեք իրականացվող սպանող, ջարդ, հավասար կոտորած՝ օտար ուժերից ուղղորդվող (նույն տեղում, 266, 428, 447):

13 *Չավուշ*, թուրք. «տասնապետ». պատմականորեն այսպես են կոչվում թրքական գորբերի տասնապետները: Անթուրայի որբանոցի դասարանների ավագները հիշատակվում են այս տիտղոսով:

14 Հմմտ. Բանեան, *Յուշեր*, 40, և «Մելգոն Պետրոսեանի յուշերը Եդեռնի օրերէն ամփոփուած

Սույն համատեքստում հարցադրումների մի փունջ ի հայտ եկավ բժիշկ Ադնան Ադըվարի գործունեության առանձնահատկությունների շուրջ՝ իբրև դարվինիստ, պոզիտիվիստ բժշկի: Հայտնի է, որ երիտթուրք ղեկավար միջուկում կային երկու՝ ուղեղային ու ծրագրային հարցեր բարձրացնող ու որոշումներ կայացնող ու իրագործող բժիշկներ, որոնք նաև կանգնած էին հայերի հանդեպ իրականացվող բժշկական փորձարկումների ետևում. նրանք բժիշկ Նազըմն ու բժիշկ Բեհաեդդինն էին: Այդ մասին իր հոդվածում խոսել է Վահագն Դադրյանը<sup>15</sup>: Բժշկական կրթություն ունեցող Բեհաեդդին Շաքիրը, լինելով *Հիլալ-ը Ահմեր*՝ Կարմիր Մահիկ կազմակերպության<sup>16</sup> պատասխանատուն և փաստացի Հայոց ցեղասպանության ծրագիրը հղացողներից մեկը, ինչպես նաև *Թեշքիլար-ը Մահսուսե*՝ Գաղտնի կազմակերպության ղեկավարը, չէր կարող առնչություն չունենալ բժիշկ Ադնան Ադըվարի հետ, քանի որ վերջինս ևս աշխատում էր *Հիլալ-ը Ահմեր*ում, ինչպես նաև անուն ու վաստակ վայելող գործիչ էր այդ շրջանում, նաև Աթաթուրքի Թուրքիայում: Միաժամանակ, Հայոց ցեղասպանության իրագործման տարիներին երիտթուրք վերնախավի կողմից որևէ բացասական վերաբերմունք չգրանցվեց Ադըվար ամուսինների հանդեպ. եթե նրանք իսկապես փրկում էին հայ երեխաների, ապա դա հիմք պետք է ծառայեր նրանց օտարման, նրանց հանդեպ բացասական վերաբերմունքի իշխող կուսակցության վերախավային շրջանակի կողմից: Եվ առնվազն նպատակահարմար է պարզել, թե ինչո՞ւ. արդյո՞ք նրանք հավատարիմ գաղափարակից ու հրաման կատարող էին, որ արժանացել էին վստահության, քանի որ հակառակը պնդել, որ նրանք աննշան կերպարներ էին, ուղղակի բացառվում է: Հետաքրքիր է, որ Հալիդե Էդիփն իր՝ 1923 թ. առաջին անգամ անգլերեն լույս տեսած հուշագրության մեջ, որտեղ Անթուրայի որբանոցին հատկացնում է 43 էջ (428-471 էջերը), չի խոսում իր ամուսնու ունեցած դերակատարության մասին ընդհանրապես, այնինչ Անթուրայի որբանոցի սան

Վարդիվատ Յովհաննեսյանի կողմէ՝ [արևմտահայերեն թարգմանություն ֆրանսերենից], *ՀՅԹ-ի ֆոնդեր*, բ. 8, թպ. 148, ֆհ. 231, էջ 15:

15 Vahakn Dadrian, “The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians,” *Holocaust and Genocide Studies* 1, no. 2 (1986): 169-192.

16 *Hilâl-i Ahmer Cemiyeti* կամ *Կարմիր մահիկի կուսիսե*, հիմնվել է 1868 թ. հունիսի 11-ին, հումանիտար բարեգործական կազմակերպություն՝ օսմանյան կարմիր մահիկի խորհրդանիշով, որն առաջին անգամ օգտագործվել է ռուս-թուրքական 1876-78 թթ. պատերազմի ժամանակ: 1877 թ. վերանվանվել է «Օսմանյան կարմիր մահիկի համայնք», 1923-ին՝ «Թուրքիայի կարմիր մահիկի համայնք», իսկ 1935-ին Մուստաֆա Քեմալի կողմից՝ «Թուրքական կարմիր կիսալուսնի համայնք», ավելի ուշ՝ 1947-ին «Կարմիր կիսալուսնի ասոցիացիա» [Kızılay Derneği]: Ներկայում կոչվում է՝ «Թուրքական կարմիր կիսալուսն» [Türk Kızılayı կամ պարզապես՝ Kızılay]: Միջազգային կարմիր խաչի և կարմիր մահիկի շարժման (անգլ. “International Red Cross and Red Crescent Movement”) մաս է, նպատակը, ինչպես ընդհանուր կազմակերպության պարագայում, ռազմագերիներին, վիրավոր և հիվանդ զինվորականներին բժշկական օգնություն ցուցաբերելն է, աղետներից, պատերազմներից, վարակիչ հիվանդություններից առօրյա խնդրերին մարդասիրական օգնություն տրամադրելը՝ ինչպես անցյալում, այնպես էլ՝ ներկայում: Հալիդե Էդիփը եղել է Կարմիր մահիկի ակտիվ կամավորներից մեկը (Chris Gratien, Seçil Yılmaz “Red Crescent Archives (Turkey),” at <http://hazine.info/turkish-red-crescent-kizilay-archives-ankara/> ղիսվել է 22.10.2020, “150 Years – From Hilal-i Ahmer to Kızılay (Red Crescent),” at <https://www.skylife.com/en/2019-06/150-years-from-hilal-i-ahmer-to-kizilay-red-crescent> ղիսվել է 22.10.2020):

Հարություն Ալբոյաջյանի հուշերում Ադնան Ադըվարը ոչ միայն ներկա է, այլև ունի շատ հստակ դերակատարում. նա որբերին հոգեբանորեն համոզողն է՝ Անթուրա տեղափոխվելու, և Դամասկոսի մզկիթներից մեկի՝ ժամանակավոր ապաստարանից դեպի Ջունիե ու ի վերջո Անթուրա ուղեկցողը՝ երկու զինվորական սպաների ու մի քանի կանանց՝ հավանաբար ուսուցչուհիների, ուղեկցությամբ: Խնդիրն էլ ավելի խորությամբ նայելու դրդապատճառը հենց այս անձինք են, իրենց դերակատարությունն ու մասնագիտությունը, որոնք պետք է լինեին թրքացմամբ զբաղվող որբանոցում, որոնց գործառույթները միգրացե էլ ավելի լայն էին, քան միայն թրքացումը: Սակայն Ադնան Ադըվարի անձին ու գործին, երիտթուրքական չարիքի աստիճանակարգում նրա դիրքին, հետևաբար՝ նրա մասնակցությանը հայերի հանդեպ իրագործվող ցեղասպանական արարքներին, Անթուրայի որբանոցի հետ առնչությամբ, նախատեսվում է անդրադառնալ առանձին հոդվածով:

Կարծում ենք խնդրի լուսաբանման համար որոշիչ դերակատարություն ունեցող առանձին մանրամասներ վեր հանելու հարցում, նպաստավոր է նախ հարցադրումներ կատարելը, ինչն իբրև պլան-մինիմում հավակնում ենք կատարել սույն հոդվածում՝ դրանով իսկ որոշակիություն մտցնելու համար խնդրո առարկայի շուրջ: Սույն հոդվածով չենք հավակնի տալու նշված բոլոր հարցերի պատասխանները՝ անդրադառնալով դրանց միայն մի մասին և հետագա ու ածանցվող հարցերի պատասխանները փնտրելու աշխատանքը թողնելով հետագայում:

### **Հայ երեխաների իսլամացման որոշ առանձնահատկություններ Անթուրայում. Նոր ենիչերիներ**

Ընթերցելով Անթուրայի որբերի հուշերը, պարզ է դառնում, որ որբանոցը զինվորական ուղղվածություն ուներ, և երեխաներին զինվորական ծառայության էին նախապատրաստում: Հարություն Ալբոյաջյանն իր հուշերից բացի իր կյանքի պատմությունը հակիրճ ձևով պատմել է նաև Վերժինե Սվազլյանին՝ որոշ հույժ հետաքրքիր տարբերություններով ու ուղղակի բնորոշումներով. օրինակ՝ նա Անթուրայի իրենց որբանոցը կոչում է զինվորական որբանոց<sup>17</sup>, որ հատուկ օրենքներ ուներ: Այս բնորոշումն էական է մեր այս ուսումնասիրության համար: Ուստի նպատակահարմար է ընթերցողի ուշադրությունը հրավիրել նաև մինչև Անթուրա տեղափոխելը երեխաներին հավաքագրելու ուղղությամբ տարվող քայլերին:

Գառնիկ Բանյանի հուշի համաձայն՝ Համայի կայարանում՝ Անթուրա տեղափոխվելու մեկնակետում, երեխաների խումբն ականատես է լինում մի զինվորականի պատվավոր ընդունելության արարողությանը. «Մահմուտ Շէվքեթ փաշա<sup>18</sup>, ձայն

17 Վերժինե Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապորոհների վկայություններ*, Երկրորդ համալրված հրատարակություն (Երևան, «Գիտություն» հրատ., 2011), Հարություն Ալբոյաջյանի վկայությունը (թ. 247), 439:

18 *Մահմուդ Շէվքեթ փաշա* (1858-1913), ծագումով չեչեն, *Mekteb-i Harbiye*-ի [Ռ-ազմական ակադեմիա] շրջանավարտ օսմանյան զինվորական, իթթիհադական գործիչ, համարվում է օսմանյան ռազմական ավիացիայի հիմնադիրը (1911 թ.): 1908 թ. հեղափոխությունից հետո Սալոնիկում տեղակայված



տուին աջ ու ձախն: Փաշան, ժպտուն դեմքով անցաւ որբերու առջևն, յետոյ քանի մը խօսք խօսեցաւ բարձրաստիճան զինուորականներուն և պատուելիին հետ: Այս բոլորին ականատես՝ որբերը քարացած կեցեր էին»<sup>19</sup>: Այս կոչից առաջին հայացքից կարելի է կարծել, որ փաշան, որի անունը հնչեցնում են, նույն զինվորականն է, որն անցավ որբերի առջևից, սակայն այդ ժամանակ արդեն Մահմուդ Շեքեթ փաշան մահացել էր, և նրա անունը կանչելը կարող էր այլ բանի մասին վկայել. օրինակ, որ որբերին տանում էին պատրաստելու ռազմական կրթության, մասնավորապես ռազմական ավիացիայի բնագավառում, որի հիմնադիրն Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ արդեն սպանված՝ իթթիհադականների պահապան Մահմուդ Շեքեթ փաշան էր: Վերջինս մեծ զինվորական հեղինակություն էր, և նրա անունը հնչեցնելը ոգեկոչման և գաղափարական պատկանելության նշան կարող էր լինել: Կամ գուցե երեխա լինելով՝ Բանյանի հիշողության մեջ տպավորվել է այդ անունը, այսինքն՝ հնչեցվել է մեկ անուն, մտապահվել՝ մեկ ուրիշը, քանի որ Մահմուդ Շեքեթի անունը նաև հոլովվում էր Անթուրայի որբերի երգած փառաբանական երգերում<sup>20</sup>:

Հարություն Ալբոյաջյանը պատմում է, որ ամենաառաջին և միակ դասը որբանոցում զինվորական քայքն էր, հետագայում այլ դասեր հավելվեցին, երբ երեխաների թվաքանակը շատացավ ու սկսեցին անցնել դասեր, որոնք կնպաստեին թրքացմանը՝ օրինակ՝ թուրքերեն լեզու և գրականություն, իսլամ և իսլամի պատմություն<sup>21</sup>: Մելքոն Պետրոսյանը փոխանցում է մի մանրամասնություն, որը կարևոր է մեր այն հետևության համար, որ Անթուրայի թրքական որբանոցում տղա երեխաներն առանձնահատուկ ուղղվածության զինվորական ծառայության համար էին պատրաստվում՝ համենայն դեպս, դա վերաբերում էր առողջ երեխաներին: Մելքոն Պետրոսյանը հաղորդում է, որ իրենք «... մարզանքը զինուորական ձևով կ'ընէինք, որպէսզի ամէնքնիս զինուոր ըլլայինք երթալու Հարայիյէ Մէքթէյի»<sup>22</sup>, զինուորական դպրոց»<sup>23</sup>: Այն, որ հնարավոր է, որ սույն նպատակը մասնակիորեն իրականացվել է, վկայում է նույն սանի հետևյալ միտքը. «1918 զարնան շատ աւելի խստացուցին, մեզմէ քիչ թէ շատ մեծ և ըմբոստներէն

3-րդ բանակի հրամանատարն էր, որն իր ռազմական կորպուսով 1909 թ. մարտի 31-ին սկսած հակահեղափոխական գործողությունները ճշողն եղավ՝ Արդուլիամիդ II-ին արտրելով ու պահելով Սալոնիկում: 1913 թ. հունվարից սկսած եղել է օսմանյան մեծ վեզիրը՝ վեց ամիս անց սպանվելով Նազըմ փաշայի հարազատներից մեկի կողմից՝ իբրև վրեժ Նազըմ փաշայի սպանության. “Mahmud Şevket Paşa,” at <https://www.britannica.com/topic/army>, դիտվել է 15.10.2020 թ.:

19 Բանեան, *Յուշեր*, 129:

20 Նույն տեղում, 155:

21 Տե՛ս Ալբոյաջյան, *Խաչեղության ճամփաներով*, 40, 44: Բացի նշվածից երեխաներն ունենում էին աշխարհագրության, թվաբանության, քաղաքավարության կանոնների ու բժշկագիտության դասեր, իրագիտություն [=բնագիտություն], երաժշտության ու երգեցողության դասեր. *Մելգոն Պետրոսյանի յուշերը*, 14, նաև՝ Բանեան, *Յուշեր*, 153, 208:

22 *Հարբիյէ Մեքթեթի* (օսմ. *Mekteb-i Erkân-i Harbiyye-i Şâhâne* կամ *Erkân-i Harbiye Mektebi*, իսկ կարճ՝ *Harbiye Mektebi*), ռազմական ակադեմիա Օսմանյան կայսրությունում, հիմնադրման տարեթիվը համարվում է 1834 թվականը: Այն Օսմանյան կայսրության բանակի համար սպայական կադրեր պատրաստող կրթական հաստատություն էր: Երկայումս խոսակցականում պահպանելով իր պատմական անունը՝ *Harbiye Mektebi*, պաշտոնապես կոչվում է *Kara Harp Okulu*:

23 *Մելգոն Պետրոսյանի յուշերը*, 14:

50 տղայ զատեցին և մի քանի ուսուցիչ, տարին Պոլիս, յետոյ իմացանք, որ Պոլսոյ շրջանները տեղ մը արգելափակած են խիստ հսկողութեան տակ, այս լուրը իմացանք այնտեղէն փախչողէ մը Այնթապցի որուն Մէհմէտ կ'ըսէին»<sup>24</sup>: Այսինքն՝ Անթուրայի որբերի մի խումբը, այնուամենայնիվ, թրքական կառավարության ձեռնարկած թրքացման գործընթացին ու որոշ նպատակի իրագործման ծառայել է, սակայն աղբյուրների բացակայության պատճառով չենք կարող ասել, թե նրանց հետագա ուղին ինչ հանգրվանի է հասել. արդյոք հայ որբախուզական ծառայությունները, անհատները նրանց հետ են վերադարձրել հայ ինքնությանը՝ պատերազմից հետո, թե՛ նրանք անդարձ կորել են հայության համար, կամ գուցե թե՛ և՛ մեկը, և՛ մյուսը, որը ևս հավանական է:

Նարինե Մարգարյանն իր հոդվածում ունի մեջբերված նման վկայություն. Անթուրայի սան չհանդիսացող մի հայ երեխա՝ Խորեն Գլճյանը, պատմում է Հարբիյե Մեքթերի տեղափոխվելու մասին. «Խորեն Գլճյանին Հալեպից տանում են Կ.Պոլսի «Հարբիյե» զինվորական կենտրոնական դպրոց: Այստեղ բոլորին պղծեցին կնիքներ են տալիս՝ իրենց նոր թուրքական անունով: Նա ստանում է «Ալի օղլու իսլամ» անունով կնիքը, որը տնօրենության կարգադրությամբ միշտ պետք է վզից կախված լիներ»<sup>25</sup>:

Այն, որ Անթուրայից սաներ են տեղափոխվել Կ.Պոլիս, վկայում է նաև Հարություն Ալբոյաջյանը՝ նշելով ավելի քիչ թվաքանակ՝ 20-30 հոգի, սակայն դժվար է ասել՝ արդյոք նույն ժամանակ տեղի ունեցած տեղափոխության մասին են խոսում երկու որբերը, թե՛, այդ տեղափոխությունները Կ.Պոլիս պարբերաբար են տեղի ունեցել. տեքստից հստակ երևում է, որ այդ տեղափոխությունը եղել է մինչև 1918 թ. աշունը. «Այդ օրերին մեր որբանոց այցելեց մի թուրք ծովային սպա իր թիկնապահ Ռեշաթ Օսբաշիի [կապրալ] հետ, որը շատ ճարպիկ մարդ էր: Նրանք եկել էին, որպեսզի որբանոցից 20-30 որբ տղաների տանեին ծովային դպրոցում սովորելու: Ընտրությունը կատարելով և 10-15 օր մնալով նրանք գնացին: Քանի որ 1918 թվականին քաղաքական վիճակը խառն էր, որբանոցի մի շարք ղեկավարներ գնացին: Նրանց մեջ էր նաև Ռեշաթ բեյը»<sup>26</sup>: Ամեն դեպքում հստակ է, որ երեխաները, առնվազն նրանց մի որոշ մասը, որոնք համապատասխանում էին այդ գործին, պատրաստվում էր զինվորական ծառայության, ու դա ընկալվում էր իբրև «նոր ենիչերիություն»: Գառնիկ Բանյանը, արդեն ավելի հասուն տարիքում, հենց այդպիսի բնորոշում է տալիս իր մեկ նախադասության մեջ. «... Անթուրան իր վարչակարգով, իր մանկավարժական հասկացողութեամբ, տևապես որբերը սոված պահելու իր անգթությամբ ստիպած էր մեզ որ դառնայինք գող, ասպատակ, փողոցի ստահակ: Բայց ինչ որ կը կատարուէր, մեր ձեռքը չէր: Այդ իրերու կեանքի պայմաններն էին, որ մեզ մարդկութենէ դուրս բերած, այլանդակած էին մեր հոգին: Այնպէս որ եթէ մեր գիտակից կամ բնագոյական ընդդիմութիւնը չըլլար

24 Նույն տեղում, 16:

25 Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացը», 33: Այս հատվածում ամենայն հավանականությամբ «կնիք» ասելով հասկացվում է նշանակը (անգլ. badge), որ գործածվում է թե՛ զինվորական ու ոստիկանական համակարգում և թե՛ բանտերում:

26 Ալբոյաջյան, *Խաչելության ճամփաներով*, 49:

և եթե օրին մէկը թրքաձայինք թուրք ազգը հազարէ աւելի գողերով, աւագակներով, աննկարագիր մարդերով անլցուցած կ'ըլլայինք, շատ յարմար ենիչերիական նոր գունդեր կազմելու համար»<sup>27</sup>: Համոզված ենք, որ թրքացնելը միայն միջանկյալ, սակայն կարևոր օղակ էր, իսկ վերջնականատակը նրանց պետությանը սպասարկու դարձնելն էր՝ նրանց հայ ու քրիստոնյա ինքնությունը ջնջելով, ինչը որոշ երեխաների պարագայում, ինչպես նկատեցինք վերևում, մեծ հավանականությամբ արվել է: Տղա երեխաներին զինվորական դարձնելու հեռանկարը բխում էր առաջին հերթին մարդուժի պակասից, ընդ որում՝ այնպիսի մարդուժի, որն ունակ կլիներ յուրացնելու պատերազմում անընդհատ զարգացող ու թարմացվող ռազմական տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները: Իսկ Օսմանյան կայսրության՝ ցեղասպանվող քրիստոնյա ազգերի մնացորդացը՝ նրանց երեխաներն իրենց մտավոր ունակություններով կարող էին ուղղորդվել այդ ճանապարհով:

Հետաքրքիր գուգադիպությամբ, Հալիդե Էդիփի՝ ավելի քան մեկ տասնամյակ անց լույս տեսած գրքերից մեկում՝ «Թուրքիան դիմադարձում է Արևմուտքին» վերնագրով, կարելի է առանձնացնել ենիչերիական ավանդույթի միանգամայն դեմոկրատական լինելու մասին մտքեր, որոնցից մեկը հետևյալն է. «Դրվածքի ու կարգուկանոնի հանդեպ սերը դեմոկրատական սկզբունքների հետ համադրելու համար պահանջվում էր կայսրության բոլոր ռասաների ներգրավումը այդ կարևոր դասակարգի [ի նկատի ունի զինվորական դասակարգը - Շ. Խ.] մեջ: Նրանք [թուրքերը - Շ. Խ.] հասան այդ նպատակին՝ բոլոր ենթակա ազգերի երեխաներից մի որոշակի քանակի զինվորական ծառայության կոչելով...»<sup>28</sup>: Էդիփը դեմ էր այդ համակարգը քրիստոնյա պատմաբանների հետևողությամբ «արյան պարտք» կոչելուն ու հավելում է, որ պետք է դրան նայել ոչ թե էթնիկական, այլ այն տեսակետից, թե արդյո՞ք դա պետության համար արդյունավետ ինստիտուտ էր, թե՞ ոչ. նրա պատասխանը մեկն է՝ այն արդյունավետ էր մինչև բուրժուական ֆավորիտիզմի ինստիտուտը չստիպեց այդ ինստիտուտին մղվել ետին պլան ու լուծարվել<sup>29</sup>: Այս մտքերը օրինաչափորեն մատնանշում են, թե ինչ վերաբերմունք ու մոտեցում երիտթուրք վերնախավի հետ համագործակցող գրագիտուհի Հալիդե Էդիփը կարող էր ի մտի ունենալ Հայոց ցեղասպանության հայ որբերին թրքացնելու գործին մասնակցելիս: Առնվազն կարելի է նկատել էթնիկականի գոհաբերում նպատակահարմարությանը, ինչը և կատարեցին երիտթուրքերը հայերի հանդեպ 1915-1923 թթ.՝ ցեղասպանության իրագործումով և, բացի այդ՝ համոզված ենք, որ եթե գրքի հրատարակման ժամանակ երեխաների տեղափոխումը մի խմբից մյուսը քրեորեն պատժելի լիներ միջազգային իրավունքով, իրեն իբրև արևմտյան լուսավորյալ արժեքների ջատագով ներկայացնող ու սեփական կերպարի, հեղինակության մասին խորապես հոգացող Էդիփը կշրջանցեր ու կխուսափեր այս մտքերն արտահայտելիս: Եվ կարծում ենք, որ այդ հեղինակության մասին հոգալով է նաև նա իր հուշերում լայնորեն բաց թողել հայ երեխաների թրքացմանն առնչվող բազմաթիվ ոչ ցանկալի դրվագներ, որին մասնակցել է ոչ միայն ինքը, այլև ամուսինը,

27 Բանեան, *Յուզեր*, 215:

28 Edib, *Turkey Faces West*, 20:

29 Նույն տեղում, 21:

և որի միջազգային վարկը ևս անհրաժեշտ էր՝ լուսավորյալ երևալու, Արևմուտքին առաջադեմ ներկայանալու կարևոր նպատակ հետապնդելով:

Զարմանալի չի թվա, եթե մի օր պարզվի, որ օրինակ Սարիհա Գյոքչեն - Խաթուն Մեպիլջյան անունով հայուհին ևս եղել է կան Անթուրայում, կան Անթուրայի կարգի որբանոցում, որտեղ կիրառվել է իսլամացման ու թրքացման այս ողջ արսենալը. հետաքրքիր գուգադիպությամբ՝ նա պատրաստվել է ռազմական կարիերայի համար, իսկ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը նրան նույնիսկ տալիս է «ենիչերի» բնորոշումը. «... եթե զերծ մնանք անհարկի զգացմունքայնությունից, ապա կարող ենք ասել, որ Սարիհա Գյոքչենը կան Խաթուն Մեպիլջյանն իր կենսագրությամբ և ռազմաօդաչուական գործունեությամբ, որքան էլ կոպիտ հնչի, համապատասխանում է *ենիչերի* ձևակերպմանը: Նա վաղ հասակում թուրքացվել ու իսլամացվել է, նրան տվել են ռազմական կրթություն և դաստիարակել «թուրքերի հոր» աղջիկը լինելու հոգեբանությամբ: Ազգային ինքնագիտակցության այն ենթադրյալ առկայծումները, որոնց մասին վկայում են տարբեր աղբյուրներ, միշտ ստորադասվել են թուրքական առաջին օդաչուի, այլ խոսքով՝ ենիչերիի կերպարին»<sup>30</sup>: «Թուրքերի հոր աղջիկ» լինելը ևս ունի իր գուգահեռը ենիչերիական կորպուսի կոնցեպտի հետ. այն է՝ ենիչերիների՝ սուլթանի սեփականությունը լինելով և անմիջական ենթակայության տակ գտնվելով՝ «սուլթանի երեխաներ» հորջորջվելը<sup>31</sup>:

Գառնիկ Բանյանի հուշերի վերջին մեջբերման մեջ թվարկված բացասական հատկությունները («գող, ասպատակ, փողոցի ստահակ...»), մեր կարծիքով, ևս նպատակային էին սերմանվում. կարող ենք դրանք կոչել թե՛ հոգեբանական փորձարկումներ՝ և թե՛ կտտանքներ: Անթուրայի կառավարչությունը երեխաներին դրդում էր դիմացկունության և գոյության համար պայքարելու՝ քաղցով ու ծարավով, գողության ու ավազակության մղելով, ֆիզիկական կտտանքների ենթարկելով (Ֆալախա, ծեծ՝ հիմնականում գլխին), նաև հոգեբանական ներագուման, այդ թվում՝ պատկերների, օրինակ՝ թատրոնի<sup>32</sup> շտրիիվ հոգեբանության, աշխարհայացքի ու մտածողության փոփոխության միջոցով:

30 Ռուբեն Մելքոնյան, *Իսլամացված հայերի ինդիդենտի շուրջ* (Երևան, «Նորավանք» հրատ., 2009), 26-27:

31 Տե՛ս օրինակ Георгий Введенский, *Янычары* (СПб.: Атлант, 2003), 12, 13:

32 Տե՛ս Ալբոյաջյան, *Խաչելության ճամփաներով*, 46, որտեղ հեղինակը պատմում է Բեյրութում աղջիկների մի որբանոցում (տեքստում որբանոցի անունը «Նկրհատխանա» է գրված, գուցե ձեռագրի սխալ ընթերցման արդյունք է, քանի որ նման անվանումով որբանոց չկարողացանք գտնել) մաքուր թրքերենով խաղացած Հովսեփ Գեղեցիկ ներկայացման մասին, որը նվագախմբում նվագող որբերը հերթական անգամ դիտում են, երբ մեկնած են լինում Բեյրութ: Ալբոյաջյանը հայտնում է, որ դա շատ տարօրինակ էր, քանի որ թուրքերը պետք է աստվածաշնչյան դրվագ ներկայացնեին: Ինչպես պարզվում է, դերասանները Կ.Պոլսում Հալիդեի «որդեգրած» հայ աղջիկներն էին, որ թրքացվել էին և Հալիդեի հետ տեղափոխվել Բեյրութ (Ալբոյաջյան, *Խաչելության ճամփաներով*, 48): Կարծում ենք աստվածաշնչյան հենց այդ պլոտեն պատահաբար չէր ընտրված. չէ՞ որ պատումը երբայրներից դավաճանվելուց ու լքվելուց, գրկանքներից, գերությունից ու ստրկությունից հետո որոշակի հաջողությունների հասած երիտասարդի մասին է, և դա կարող էր տեղավորվել թրքացման ընդհանուր տրամաբանության մեջ՝ որբերի մտքում իրենց հնարավոր ապագայի գուգահեռների տեղիք տալով: Միաժամանակ կարծում ենք, որ որբերի դիտած ներկայացման հեղինակը հենց Հալիդե Էդիսին էր, և Ալբոյաջյանի դիտածը Էդիսիի «Քանանի հովիվները» պիեսն էր. տե՛ս Halide

Օրինակ՝ երեխաներին սովի մասնելով լուծվում էր իսլամանալու հարցը՝ հետևյալ կոնտեքստում. «Յաջորդ առտու ալիւրէ ապուր կերանք, դուրս չելած յայտարարեցին որ այն որ հաքք տինը (թուրք հաւատքը) կ'ընդունի պէտք է անուն մը ընտրէ և արձանագրուի: Անոնք կէսօրին մասնաւոր միտով ճաշ, հաց ուզածին չափ պիտի ուտեն և այլն...Ալիւրը ջուրին խառնուած ապուրը ուտելէն արդէն կ'մախք դարձած էինք, երբ որ միսին հոտը առինք մաս մը արձանագրուեցան, մենք ալ մեր գիւղացիներով անկին մը քաշուած կ'սպասէինք ալիւրով ապուրին»<sup>33</sup>: Փաստացի երևում է երեխաներին ջրով բացած ալյուրով կերակելն ինչ նպատակ ուներ. ֆիզիկական հյուծման ու կրկնվող տհաճ սնունդի փոխարեն լավ սնունդ առաջարկելը՝ պայմանով, որ երեխաներն իսլամանալու առաջարկն ընդունեն. կամքի կոտրման, բնագոյններին հագուորդ տալուն մղելու նշույլներն այստեղ ևս նկատելի են:

Արամ Անտոնյանը ևս փաստում է, որ հայ երեխաներից իսկապես պատրաստում էին նոր ենիչերիներ. «... Աւելի ետքը տրուած հրահանգները կը յանձնարարէին լոկ հինգէն պակաս տարիք ունեցողներուն խնայել: Ասոնք պիտի թըքացուէին և իբր թուրք պիտի մեծցուէին մասնաւոր որբանոցներու մէջ, և օր մը պիտի ծառայէին պատերազմին պատճառաւ Թուրքերուն ունեցած մարդկային կորուստը լեցնելու, և Թուրք ցեղին բերելու այնքան բարձր յատկութիւնները օժտուած ցեղի մը, հայ ցեղին պատուաստը: *Ճիշդ երբեմն ենիչերիներուն պէս*»<sup>34</sup> [Այս և մյուս մեջբերումների շղագիր ընդգծումը մերն է - Շ. Խ.]:

Սույն ենթագլուխն ավարտելով Արամ Անտոնյանի՝ մեր կողմից ընդգծված այս էական մտքով՝ այս հատվածից կառանձնացնենք երկու շերտ. նախ «նոր ենիչերիների» գաղափարի վերարծարումը (որին երկրորդում է Անթուրայի որբանոցի որբ Գառնիկ Բանյանը՝ վերոբերյալ հատվածով), որը թվում է, թե պատմության գիրկն էր անցել, և երկրորդ՝ «օժտուած ցեղի մը, հայ ցեղին պատուաստը» արտահայտությունը, որին կանդորադառնանք սույն հոդվածի մեջ հաջորդիվ:

### **Պանթուրքիզմի «նոր մարդը» և Եվգենիկայի<sup>35</sup> վերաբերյալ անկնարկներ**

Հարցերի տեղիք է տալիս Գառնիկ Բանյանի հաղորդածը, որին հակադրվում է Հալիդե Էդիփի հուշերում տեղ գտած համապատասխան դրվագը: Գառնիկ Բանյանը

Edib, *Kenan Çobanları* (Istanbul: Orhaniye Matbaası, 1918):

33 Մելքոնյան, *Բալամսցված հայերի խնդիրների շուրջ*, 13:

34 Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշա* (Երևան, «Արևիկ» հրատ., 1990), 178-179:

35 *Եվգենիկա* - ուսմունք մարդկային ցեղի (նրա ժառանգական հատկանիշների) լավացման մասին, որի խնդիրն է ակտիվորեն ազդել մարդու էվոլյուցիայի վրա, կատարելագործել նրա բնույթը, նպաստել տաղանդի ժառանգմանը և հնարավորին չափ սահմանափակել ժառանգական հիվանդությունների փոխանցումը հետագա սերունդներին: «Եվգենիկա» տերմինն առաջին անգամ օգտագործել է Ֆրենսիս Գալթոնը՝ Չառլզ Դարվինի զարմիկը, 1883 թվականին: Այս ուսմունքը հասարակաբարոյաբանական շրջանակներում հատկապես մեծ ուշադրություն էր վայելում XX դարասկզբի առաջին մի քանի տասնամյակներին: Հետագայում ի հայտ եկավ այս ուսմունքի բացասական երանգավորումը՝ սացիստական Գերմանիայի կողմից կիրառվելու և վերջինիս հետ նույնացվելու արդյունքում:

հաղորդում է, որ հայ երեխաների իրենց խումբը մինչև Անթուրա տեղափոխվելը ապաստան է գտնում մի պատվելիի որբանոցում՝ Համայում, սակայն իրենց բարեկեցիկ կյանքը որբանոցում, որն ըստ ամենայնի մասնավոր որբանոց էր, այսինքն՝ մարդասիրական խոշոր կառույցների ենթակայությունից դուրս էր, շուտ է ավարտվում, քանի որ Ջեմալ փաշայի կողմից ուղարկված զինվորական պաշտոնյաները գալիս ու որբերին Անթուրա տեղափոխելու նպատակով պահանջում են պատվելուց իրենց հանձնել որբերին: Լուրը չափազանց ծանր է լինում և հակադարձելու հնարավորություն չի թողնում, հայերի համար պարզ է դառնում, որ որբերին պետք է թրքացնելին: Հետաքրքրական մի մանրամաս հատկապես ուշադրություն գրավեց. «Ճեմալ փաշան այս կողմերու զինուորական հրամանատարն է: Եկող զինուորականները յայտնեցին, որ *Ճեմալ փաշան կը փափաքի բոլոր հայ որբերը իր ինսանքին տակ առնել, կրթել, դաստիարակել և մարդ դարձնել, վերջն ալ, պատերազմը վերջանալուն վերադարձնել իրենց ժողովուրդին*»<sup>36</sup>: Բանյանի այս վկայության հետ կոնֆլիկտի մեջ են մտնում Հալիդե Էդիփի հուշերում Ջեմալ փաշային վերագրվող խոսքերը, նրանց երկուսի միջև տեղի ունեցող երկխոսությունը: Հարկ ենք համարում ներկայացնել այդ հատվածն ամբողջությամբ, քանի որ յուրաքանչյուր նախադասություն կարևոր է սույն ուսումնասիրության համար. «-*Ինչո՞ւ ես դու թույլ տալիս, որ հայ երեխաներին կոչեն մուսուլմանական անուններով: Այնպես է թվում, թե հայ երեխաներն իսլամացվում են: Պատմությունը մի օր վրեժինդիր կլինի դրա համար թուրքերի ապագա սերունդներից: Դու իդեալիստ ես, - պատասխանեց նա [Ջեմալը - Շ. Խ.] խստորեն, - և ինչպես բոլոր իդեալիստները, իրականությունն զգալու պակաս ունես: Դու կարծում ես, թե մի քանի հարյուր հայ տղաների և աղջիկների դարձնելով մուսուլման ես իմ ռասայի համար նպաստավոր բան եմ անում: Դու տեսար Դամասկոսի հայկական որբանոցների վիճակը՝ հայերի կողմից կառավարվող: Այնտեղ այլևս տեղ չկա, ևս մեկ հայկական որբանոց բացելու համար այլևս գումար չկա: Սա մուսուլմանական որբանոց է, և միայն մուսուլման որբերին ենք ներս թողնում: Ես ուղարկեցի այստեղ յուրաքանչյուր թափառական անապաստան երեխայի, որ հասավ Սիրիա այն շրջաններից, որտեղ ողբերգությունն էր կատարվել: Թուրքերինն ու քրդերինն է այդ որբանոցը: Երբ ես իմանում եմ թափառող ու սովյալ երեխաների մասին, ես նրանց ուղարկում եմ Անթուրա: Ես պետք է նրանց կենդանի պահեմ: Ես չգիտեմ ինչպես: Ես չեմ կարող նրանց տեսնել փողոցներում մեռնելիս»<sup>37</sup>: Այս խոսքին Էդիփն իր հուշերում պատասխանում է, որ ինքը չի ուզում կապ ունենալ այդպիսի որբանոցի հետ, ինչին ի պատասխան Ջեմալ փաշան ասում է, որ կապ կունենա, եթե տեսնի նրանց թշվառությունն ու տառապանքը... Հարց. այդ դեպքում ինչո՞ւ են, ըստ Բանյանի վկայության, Անթուրա տեղափոխում արդեն իսկ ապաստան գտած հարյուրավոր հայ որբերին պատվելու որբանոցից և ոչ որբանոցի պատերի մոտ իսկ թափառող հազարավոր անապաստան որբերի, եթե դրդապատճառն ընդամենը թափառական երեխաներին հավաքելու մարդասիրական մղումն էր: Եվս մի քանի օրինաչափ հարցեր է սույն հատվածը առաջացնում՝ կապված*

36 Բանեան, *Յուշեր*, 122:

37 Edib, *Memoirs of Halidé Edib*, 428-429:

Հալիդե Էդիփի կողմից Ջենալ փաշային վերագրվող հետևյալ կետում. «*Դու կարծում ես, թե մի քանի հարյուր հայ տղաների և աղջիկների դարձնելով մուսուլման ես իմ ռասայի համար նպաստավոր բան եմ անում*»: Ման ինքնապաշտպանական հարցի մեջ ինչո՞ւ է հենց հայերին իսլամացնելն ու թրքացնելը նպաստավոր կոչվում, ուրեմն այստեղ ակնարկվում է եվգենիկան, որի մասին խոսում է Արամ Անտոնյանը. «... Թուրք ցեղին բերելու այնքան բարձր յատկությունները օժտուած ցեղի մը, հայ ցեղին պատռաստոր: Ճիշդ երբեմն Ենիչերիներուն պէս»<sup>38</sup>, և որի թեման առնվազն արծարծվող է եղել նաև այդ ընթացքում, ինչպես և կարող էր Էդիփի կողմից ինքնարդարացման փորձ լինել:

Եվ հարց է առաջանում. այդպիսի մարդասիրությունը ո՞ւմ համար էր, քանի որ այն միանշանակ կերպով հայ ազգի համար չէր. քրիստոնեության ջնջումը, հայերենի մոռացության տալը, ծեծն ու կտտանքները և այլ բռնություններ, որոնք, համաձայն որբերի վկայությունների, կիրառվեցին Ասթուրայի որբանոցում: Ուստի կարծում ենք, որ այն մարդը, որ ուզում էին ստանալ հայ երեխաներից՝ Օսմանյան Թուրքիայի և ապագային միտված գաղափարների համար էր. «... *ան [Ջենալ փաշան] շատ կգնահատեր հայերու խելքը և շնորհքը ու հույս ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թուրքացած հայ երեխաները պիտի ապագային ազնվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դառնայինք...*»<sup>39</sup>: Եվ հենց այս տեսլականը, գաղափարն էին հաղորդում որբերի հետևից պատվելիի որբանոց եկած զինվորականները. «...Ճենալ փաշան ոչ թե որբանոց, այլ իբրև դպրոց պիտի պահէ և կրթէ, *պարկեշտ մարդիկ պատրաստէ հայրենիքին համար*»<sup>40</sup>: Եվ սա միանգամայն հանգիստ տեղավորվում է պանթուրքական նոր երկրի՝ Հալիդե Էդիփի Նոր Թուրանի [Yeni Turan], նոր հայրենիքի [Yeni Yurdu], նոր ազգի, նոր մարդու (հանրապետական Թուրքիայում տպագրվող այս գծի *Yeni Adam* [Նոր մարդ] ամսագրում Ադնան Ադըվարը բավականին ակտիվ դեր ուներ), նոր մշակույթի փոխկապակցվածության գաղափարը, որի իրագործումը երիտթուրքական ու հարակից շրջանակների գաղափարական ուղղություններից էր<sup>41</sup>:

Հանրահայտ փաստ է այն, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ պատերազմական տարբեր կողմեր, այդ թվում նաև գերմանական ու ավստրոհունգարական կողմը, կատարում էին բժշկական փորձարկումներ, և այդ գործառնության գերծ չէին նաև օսմանյան բուժհաստատություններն ու Օսմանյան կայսրության տարածքում գործող տարբեր խնամատար միջազգային կազմակերպությունները, որոնք հանձնված էին թրքական հոգածությանը: Հարություն Ալբոյաջյանն այս առնչությամբ մեզ է փոխանցում հետևյալը. «Մյուս օրը բոլոր որբ տղաներին մի կտոր հաց բաժանեցին, և մենք կրկին ճանապարհ ընկանք: Կարճ ժամանակ անց մենք հասանք կայարան:

38 Անտոնեան, *Մեծ ոճիրը*, 178-179:

39 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 438:

40 Բանեան, *Յուշեր*, 127:

41 Նոր-ի այս գաղափարաբանության, ինչպես և՛ Հալիդե Էդիփի մասնակցության շուրջ տե՛ս օրինակ Umit Kurt, Dogan Gurpinar, "The Young Turk Historical Imagination in the Pursuit of Mythical Turkishness and its Lost Grandeur (1911–1914)," *British Journal of Middle Eastern Studies* (2016): 5-7, 8-10, 14:

Կայարանում կանգնած էր շատ շքեղ հագնված մի սպա, որի անունն էր Ադնան Բեյ... Ադնան Բեյն ասաց, որ մենք հիմա պետք է գնանք որբանոց, որտեղ մեզ շատ լավ կպահեն, մեր գղախների ծայրերին կլինեն սուլիչներ՝ մեր ցանկությունները հայտնելու համար: Ադնան Բեյը բժիշկ էր, թուրք առաջադեմ կանանցից մեկի՝ Հալիդե խանումի ամուսինը: Ըստ երևույթին նա որբանոցի մասին շատ լավ բաներ էր պատմում, որ մենք հանկարծ չփախչենք, բայց մենք փախչելու տեղ չունենինք»<sup>42</sup>: Երեխաների համար սուլիչները միշտ եղել են խաղի հետաքրքրական ատրիբուտ. համոզված ենք, որ ներկայացված հատվածում հոգեբանորեն հակելու մեխանիզմ է կիրառվել բժիշկ Ադնան Աղըվարի կողմից, որպեսզի երեխաները գնան իր կամ իրենց հետ, քանի որ երեխաների գնալն ինչ-որ պատճառով շատ կարևոր է եղել: Միաժամանակ, չենք կարող չհիշել, որ օրինակ նացիստական Գերմանիայում բժիշկ Յոզեֆ Մենգելեն<sup>43</sup> երեխաներին գրավում էր կոնֆետով, հետո նրանց վերցնում-տանում էր բժշկական փորձարկումների: Այսինքն, այս կետում մեր ուշադրությունը գրավողը Ադնան Աղըվարի մասնագիտությունն է, նրա ներկայությունն ու դերը՝ այդ ամենը համադրելով ևս մեկ փաստի հետ. Անթուրայի որբանոցի երկրորդ տնօրենը, ինչպես նշում են՝ Նայ(հ)իդ բեյից<sup>44</sup> հետո դառնում է ոմն Լյուվի բեյ: Որբանոցի սաների հուշերում հիշատակվող երկրորդ տնօրեն Լյուվի բեյը, ըստ որբերի, մասնագիտությամբ ևս բժիշկ էր: Փնտրտուքը մեզ կենտրոնացրեց մեկ պատմական անձնավորության՝ բժիշկ Լյուվի Բըրդարի<sup>45</sup> շուրջ, որը, կարծում ենք, հենց վերոնշյալ բժիշկ Լյուվին է եղել և հետագայում էլ հանրապետական Թուրքիայում զբաղեցրել պետական բարձրաստիճան պաշտոններ՝ լինելով առողջապահության ու սոցիալական անվտան-

42 Ալբոյաջյան, *Խաչելության ճամփաներով*, 36-37:

43 *Յոզեֆ Մենգելեն* (1911-1979), նացիստական Գերմանիայի Լաեու-ական զինվորական բժիշկ, հայտնի է «մահվան հրեշտակ» մականվամբ: Առավել հայտնի է Աուշվիցի համակենտրոնացման ճամբարում մարդկանց նկատմամբ կատարած բժշկական փորձարկումներով, որոնք հաճախ մահվան ելք էին ունենում: Յոզեֆ Մենգելեն նաև բժշկական անձնակազմի մաս էր, որն ընտրում էր գազախցիկներում սպանվող հերթական զոհերին: Մենգելեն ուներ դոկտորական աստիճան մարդաբանությունից ու բժշկագիտությունից, խոր գիտելիքներ էր ձեռք բերել ժամանակի նորաձև գենետիկ, ռասայական տեսություններից ու անձամբ էր կատարում փորձեր ու փորձարկումներ: Պատերազմից հետո Յոզեֆ Մենգելեն ծառայում էր տարբեր երկրներում և թաղվում կեղծանվամբ. տե՛ս օրինակ Gerald L. Posner, John Ware, *Mengele: The Complete Story* (New York: Cooper Square Press, 2000):

44 Նայիդ կամ Նահիդ բեյ, զինվորական, հիշատակվում է Հարություն Ալբոյաջյանի և Մելքոն Պետրոյանի հուշերում միայն. ըստ Ալբոյաջյանի՝ նա զինվորական էր Մարաշից, որոշ ժամանակ անց նրան տեղափոխում են Պաղեստին (Ալբոյաջյան, *Խաչելության ճամփաներով*, 43), իսկ Պետրոյանը միայն անունն է հիշատակում (*Մեղզոն Պետրոսեանի յուշերը*, 12): Այս անունով գտանք երիտթուրք ակտիվիստ, եվրոպական կրթություն ստացած զինվորական Մեհմեդ Նահիդ Բերվենին, սակայն նա մարաշցի չէ. “Mehmet Nahid Kerven,” at <https://www.bu.edu/ckls/home/mehmet-nahid-kerven/>, դիտվել է 02.09.2020: Անթուրայի առաջին տնօրենի անձի բացահայտումը բազմաթիվ հարցերի պատասխաններ կարող է տալ Անթուրայի առնչվող հարցերի մասին:

45 Լյուվի Բըրդար (1887-1961), թուրք բժիշկ, հասարակական ու քաղաքական գործիչ, հանրապետական Թուրքիայում եղել է Առողջապահության և սոցիալական անվտանգության նախարար (1957-1960) և Ստամբուլի քաղաքապետ: Ծնվել է Քիրկուկում (այժմ՝ Իրաք), 1908-1917 թթ. ընդհատումներով ուսանել և ավարտել է Ստամբուլի համալսարանի բժշկագիտություն բաժինը: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո միացել է Թուրքական կարմիր մահիկ կազմակերպությանը, մասնակցել է քեմալական շարժմանը՝ իբրև ռազմական բժշկության ծառայության ղեկավար:



գույթյան նախարար, ինչպես՝ Ստամբուլի քաղաքապետ ու նահանգապետ:

Կարծում ենք ոչ պատահական զուգադիպությամբ բժիշկներն առկա էին նաև մինչև երեխաների տեղափոխումը և մինչև Ադնան Ադըվարին հանդիպելը, որի մասին պատմում է նույն Հարություն Ալբոյաջյանը, երբ գաղթականների իրենց քարավանը կանգ է առնում Հոնս քաղաքի մի՝ արդեն գաղթականներով լի քարվանսարայում, մի բժիշկ է հայտնվում. «... մեզ մոտեցավ բավական լավ հագնված արաբ կամ թուրք մի պաշտոնյա: Մինչ մոտենալը նա ուշադիր նայում էր չորս կողմը: Նա շատ լավ խոսում էր թուրքերեն: Մոտենալով ինձ նա ասաց, թե չեմ ուզի արդյոք դառնալ նրա տղան, բայց ես շատ զայրացա և ասացի, որ ես իմ մորից չեմ բաժանվի: Նա ծոցից հանեց մի քսակ ոսկի և ցույց տվեց մորս: Մեր կողքին կային նաև այլ տղաներ, որոնք ցանկություն հայտնեցին գնալ նրա հետ, բայց նա անպայման ինձ էր ուզում տանել: Նա ասաց, որ ինքը բժիշկ է և ինձ լավ կրթություն կտա, եթե ես և մայրս համաձայնվենք նրա առաջարկին: Այսպես ամեն օր նա գալիս էր իմ ետևից և հորդորում, որ համաձայնվեմ նրա հետ գնալ: Տեսնելով, որ չի կարողանում համոզել, սկսեց սպառնալ, թե ոստիկանության միջոցով ինձ կտանի: Ես ելքը գտա, հեռվից հենց տեսնում էի նրան, թաքնվում էի, որ նա ինձ չտեսնի...»<sup>46</sup>: Բժշկի հետաքրքրությունները կարող էին կանգ չառնել միայն մեկ երեխայի վրա, այլ նրա գործելու դաշտը հաստատապես ավելի լայն էր, և նույն հատվածից էլ պարզ է դառնում նրա համագործակցությունը ոստիկանապետի հետ, և ամենայն հավանականությամբ, նաև պետական կառույցներից թույլտվություն ունենալը: Անթուրայի որբերի հուշերի տարբեր դրվագներում բժիշկների ներկայությանը անհնար է ուշադրություն չդարձնել:

Եվգենիկայի մասին վկայող հատվածների հանդիպում ենք հենց Անթուրայի հայ սաների հուշերում. «Հայ որբերը «հոգածու ձեռքեր» ու յանձնել ճեմալ փաշայի որոշումը հեռու մարդասիրական զգացումներ է բխած ըլլալէ՝ կոպիտ ու ստորին որոգայթ մըն էր, որբերը թրքացնելու և ատով իսկ թուրք արիւնը ազնուացնելու անամօթ փորձ մը: Թուրքը ծանօթ էր հայ մարդուն: Դարեր շարունակ հայ մարդուն հացով, հայու աշխատանքով սնած, այսօր ալ, հայու այս դժբախտ օրերուն, հայու զաւակները իւրացնելու դիւային ծրագիրը գործադրության կը դնէր»<sup>47</sup>, կամ՝ «Խալիտէ Էտիպ կը նայէր տղոց ու իր հոգիին մէջ կը հրճուէր, քանի մը տարիէն այս տղաքը թրքացած պիտի ըլլան և թուրք արիւնը պիտի ազնուացնեն»<sup>48</sup>:

Նույնի մասին նաև հաղորդում է Հարություն Ալբոյաջյանը՝ Վերժինե Սվազլյանին

1923 թ. հանրապետության հռչակումից հետո մեկնում է Վիեննա և Մյունխեն, վերապատրաստվում ակնաբուժության բնագավառում, իսկ մեկ տարի անց վերադառնալով՝ ստանձնում տարբեր պետական պաշտոններ՝ մինչև կաթվածից մահանալը 1961 թվականին, երբ զինվորական տրիբունալի առաջ պաշտպանվում էր ռազմական հեղաշրջումից հետո իրեն հասցեագրված մեղադրանքներից (“Lütfi Kırdar,” at <https://www.beyaztarih.com/ansiklopedi/lutfi-kirdar> դիտվել է 22.10.2020, նաև՝ “Lütfi Kırdar,” at <https://www.biyografi.net/kisiyrinti.asp?kisiid=1415>, դիտվել է 22.10.2020):

46 Ալբոյաջյան, *Խաչերության ճամփաներով*, 26:

47 Բանեան, *Յուշեր*, 126:

48 Նույն տեղում, 168:

տրված իր վկայության մեջ, որն արդեն նախորդ ենթավերնագրում մեջբերել ենք, սակայն սույն ենթավերնագրի հայացքը ուղղված է այլ ուղղությամբ, ուստի մեր կողմից շղատառ ներկայացված հատվածը՝ սույն ենթավերնագրի առարկային համահունչ՝ նույնպես այլ է. «Ջենալ փաշան հրամայած էր մեզի լավ նայել: Քանի որ *ան շատ կգնահատեր հայերու խելքը և շնորհքը* ու հույս ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թորքացած հայ երեխաները պիտի ապագային ազնվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դառնայինք: Այդ նպատակով Ջենալ փաշան Պոլսից ուսուցիչներ, բժիշկներ բերել տվեց, քանի որ մեր որբերի մեծ մասը ցինկայով հիվանդացավ ու մեռավ...»<sup>49</sup>:

Միաժամանակ Անթուրայի բժշկական իրավիճակը՝ սանիտարականի հետ, բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս. «Որբերուն մէջ հիւանդացողներուն թիւը երթալով կ'աւելնար, առաջին օրերու բոլորովին ամայի հիւանդանոցը սկսեր էր նեղ գալ և որբանոցին բժիշկն ալ ճորքան իր մասնագիտութեան տէր էր յայտնի չէր, իրեն ներկայացնող հիւանդները կը քննէր, դեղեր կու տար և սակայն, փոխանակ աղէկնալու, աչքերնին կը գոցէին ալ չբանալու համար: Արդէն ութը-տասը հոգի մեռեր էր քանի մը շաբթուայ մէջ»<sup>50</sup>:

Ուստի օրինաչափորեն պետք է ուսումնասիրվի երիտթուրք պանթուրքիստական գաղափարախոսների ու էլիտայի՝ համապատասխան բժշկական, կենսաբանական մարդաբանության, գենետիկառասայական տեսությունների հանդեպ հակվածությունը, ինչպես՝ Անթուրայի որբանոցում կիրառվող բժշկական ծառայությունները, գուցե նաև՝ փորձարկումների հնարավոր լինելը, որոնք կարող են բացահայտել երիտթուրք ընդհանուր ցեղասպանական գաղափարների շատ նոր շերտեր ու երևույթներ, համալրել եղածները:

### **Հալիդե էդիփի հաղորդածն ընդդեմ որբերի հաղորդածի. խաբուսիկ գրագիտություն, հակամանկավարժություն ու գաղտնիության շղարշ**

Հալիդե էդիփին իրավամբ կարելի է համարել Հայոց ցեղասպանության առաջին ռևիզիոնիստներից, ընդ որում՝ նրա մոդելը դասակարգելով Հայոց ցեղասպանության ժխտողականության ժամանակակից շրջանին բնորոշ ժխտողականության մոդելի մեջ, երբ քանիցս ոչ թե ժխտվում է կոտորածների փաստացի իրողությունը, այլ դա մեկնաբանվում է իբրև պատերազմում երկուստեք իրագործվող, հավասար կոտորած, բախում<sup>51</sup>, և ոչ երբեք պետական, ծրագրված ցեղասպանական քաղաքականություն. «Նրանք թուրք, քուրդ և հայ էին: Յուրաքանչյուր երեխա ուներ իր ողբերգությունը, յուրաքանչյուրի ծնողն սպանվել էր մյուսի ծնողի կողմից, և հիմա բոլորը կրում էին մինևնույն թշվառության և արհավիրքի հարվածները: Յուրաքանչյուր

49 Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 438:

50 Բանեան, *Յուշեր*, 146:

51 Edib, *Turkey Faces West*, 142-144, 165-166, 174.

երեխա ուներ թուրքական և մուսուլմանական անուն»<sup>52</sup>:

Հետաքրքրական է Անթուրայի որբանոցի որբերի կեցության շուրջ մտահոգ լինելու կոնստեքստում Էդիփի հետևյալ «խոստովանությունը». «Երկու ամիս՝ 1916-ի սեպտեմբերից մինչև նոյեմբեր ինձ համար ամենացավալի ամիսներն էին պատերազմի ընթացքում: Ես ծայրահեղ հուսահատության մեջ էի... Ես անկարող էի մի տող անգամ գրելու, և եթե իսլամն ունենար կանանց ճգնակեցական կյանք, ես առանց վարանման կդառնայի ճգնակյաց»<sup>53</sup>: Հալիդե Էդիփի սույն հաղորդածին հակադրվում է Գառնիկ Բանյանի հետևյալ հաղորդածը. «Դուրսը, Խալիտե Էտիպ կը քալեր, կարծեք երանութեան մէջ ըլլար: Այս կինը տարբեր աշխարհի մէջ ըլլար կը թուէր: Սովի, գրկանքի աշխարհին մէջ ապրող միակ երջանիկ արարածը: Կէսօրէ ետք երբ որբերը դասարանները կը մտնէին, Խալիտե Էտիպ ալ կը քաշուէր իր յարկաբաժինը: Օրին մէկն ալ գրոյց շրջեցաւ թէ Խալիտե Էտիպ որբերու կեանքին մասին կը գրէ: Զրոյցներ կը շրջէին, որ մեծ տղաքներուն արիւնը կը ծծէ: Շատ բաներ, հաւատալի թէ անհաւատալի, կը պատմէին: Որն էր ճիշդը, որը՝ շինծուն, յայտնի չէր»<sup>54</sup>: Եթե անգամ խոսքը վերաբերում է Հալիդե Էդիփի կյանքի տարբեր հատվածներին, ապա այս կարգի հակադրություններն անգամ ի մի բերելը՝ թեկուզ մակերևույթ հանելու ձևով, պետք է պատասխան ստանան Հալիդե Էդիփի կերպարի, դերակատարության և Հայոց ցեղասպանության որբերի հետ առնչության ենթատեքստում:

Հալիդե Էդիփը չի ներկայացնում իր ամուսնու մասնակցությունը երեխաներին Անթուրա տեղափոխվելու համար համոզելու գործում, որի մասին արդեն իսկ խոսեցինք վերը, մինչդեռ Անթուրային վերաբերող գլխում, նա երկու անգամ հիշատակում է նրա անունը՝ մեկը նրա հետ ամուսնանալու որոշումը կայացնելու ու բուն ամուսնության (որը կայացավ 1917 թ. ապրիլի 23-ին՝ Բրուսայում) մասին հիշատակելիս<sup>55</sup>, մյուսը՝ հիշատակելով 1917 թ. հունիսին նրա գալուստը Սիրիա. «Բժ. Ադնանը, որն ստուգում էր թուրքական գորբերի հիգիենիկ պայմանները, Սիրիա եկավ հունիսին, և մենք միասին մեկնեցինք տուն»<sup>56</sup>:

Հալիդե Էդիփի հուշերից երևում է, որ նա մնացել է Անթուրայում մինչև վերջին պահը՝ հատկապես հետևյալ հատվածից, որտեղ նա, մասնավորապես նշում է, որ դեպքը տեղի ունեցավ իր վերջին այցելություններից մեկի ժամանակ. «Մեկ այլ քուրդ երեխայի հետ կապված ես ունեցա մի ողբերգական, բայց երջանիկ պատկեր, որ ամրապնդվեց մտքում: *Դա տեղի ունեցավ Անթուրա կատարված իմ վերջին այցելություններից մեկի ժամանակ: Երբ հայտարարվեց, որ ծնողները կարող են, ապացուցելով իրենց ինքնությունը, հետ վերցնել իրենց երեխաներին*, ինչ-որ հայ կանայք եկան: Բայց, քանի որ Բեյրութում և Լիբանանում շատ քիչ թուրքեր ու քրդեր կան, այս ազգերից ոչ

52 Edib, *Memoirs of Halidé Edib*, 428.

53 Edib, *Memoirs of Halidé Edib*, 431:

54 Բանեան, *Յուշեր*, 209:

55 Edib, *Memoirs of Halidé Edib*, 450:

56 Նույն տեղում, 452:

մեկը չէր գալիս հետ տանելու իրենց երեխաներին»<sup>57</sup>: Երեխաներին վերադարձի նման հրաման կարող էր տրվել և տրվել է պատերազմի ավարտից հետո՝ 1918-ի վերջերին, ինչպես երևում է Զավեն պատրիարքի հուշերից, երբ թուրքերը կորցնում են Մերձավոր Արևելքում իրենց դիրքերը, պարտվում<sup>58</sup>: Ուստի երեխաների հետ հանձնումը, միայն ընթերցելով Հալիդե Էդիբի հուշերը, կարող է թվալ ծայրահեղ մարդասիրական ակտ, այնինչ, դա պարտադրվել էր օսմանյան իշխանությանն ու զինվորականներին: Եվ քանի որ նա մինչև վերջ մնացել էր որբանոցում և առնվազն տեղյակ էր եղած անցուդարձից, խիստ կասկածելի է նրա կողմից բազմաթիվ մանրամասներ թաքցնելը կամ դրանք իրերի նորմալ դրություն ներկայացնելու մանիպուլյատիվ պատումները:

Հալիդե Էդիբի հուշերի ճշմարտացիության հանդեպ հիմնավոր կասկածն իր գազաթնակետին է հասնում նաև Անթուրայի որբանոցի՝ իբրև թրքական որբանոց փակման դեպքերը նկարագրելիս: Նա ամենը ներկայացնում է իբրև իր հորդորների արդյունք. մասնավորապես Կարմիր խաչի աշխատակիցների ժամանումն ու որբանոցի կառավարման ստանձնումը նա ներկայացնում է իբրև իր մարդասիրության դրսևորում. «Ես խնդրեցի Դ-ր Բլիսսին ու միսթր Դոդջին գալ ու տեսակցել ինձ հետ ու *աղաչեցի նրանց Անթուրան վերցնել Կարմիր Խաչի հովանու ներքո* հենց որ բախումներն սկսվեցին Բեյրութում: Երեխաները միջոցներ էին ստանում չորս ամիս շարունակ, ի երախտապարտություն մայրը Քեմալի, և տնօրենը պետք է մնար անձնակազմի անդամների մի մասի հետ մինչև վերջին պահը»<sup>59</sup>: Սույն միտքն առաջացնում է մի քանի հարց, եթե ոչ՝ հանելուկներ, և այդ հանելուկներից մեկը հետևյալն է. որբերի հուշերից երևում է, որ թուրքերը հանկարծակի են հեռանում, մնում է որբանոցի դեղագործը, որի մասին և որի անունը՝ զինվորական բժիշկ Ռ-ըզաբեյ, հիշատակում են թե՛ Մելքոն Պետրոսյանը<sup>60</sup>, թե՛ Հարություն Բոյաջյանը, և որին հրամայվել էր թունավորել երեխաներին՝ մեկնումից առաջ. «... Անսպասելի ճաշարան մտավ որբանոցի դեղագործը՝ Ռ-ըզաբեյը (զինվորական գնդապետի կոչումով բժիշկ): Սենյակի երկարությամբ քայլելով նա մտտեցավ ամենաբարձր դասարանի չառու էնվերին և ասաց. «Էնվեր չառու, տղաս»: Էնվեր չառուը ոտքի կանգնեց: Ռ-ըզաբեյը հարցրեց. «Էնվեր, տղաս, ինչպե՞ս էր քո հայ անունը, հիշո՞ւմ ես»: «Այո, հիշում եմ, Թորոս»: Այդպես նույնը կրկնելով բոլորի հետ, նա մտտեցավ և նույն հարցով դիմեց ինձ, ես ասացի, որ իմ անունը Հարություն է: Հետո առաջարկեց չառուներին և որբերին նստել: Նա ասաց, որ որբանոցի ղեկավարներից ոչ մեկը չկա, չկան նաև զինվորները: Ինքն էլ կարող էր չլինել, բայց այդ դեպքում, որբերը նույնպես չէին լինի: *Ավելի ուշ, մենք իմացանք, որ փախչելիս թուրքերը դեղագործ Ռ-ըզաբեյին հրամայել էին, որ նա վերջին ընթրիքի ժամանակ որբերին թունավորի և հետո ինքն էլ հեռանա:*

57 Նույն տեղում, 467:

58 Զառէն արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաերագիրներ եւ վկայութիւններ* (Գահիրէ, «Նոր Աստղ» տպարան, 1947), 254:

59 Edib, *Memoirs of Halidé Edib*, 469:

60 Մելգոն Պետրոսեանի յուշերը, 12:

Բայց Ռեզա Բեյը չէր համաձայնվել նման ոճրագործության»<sup>61</sup>: Անթուրայի փակումը Էդիփը ներկայացնում է ոչ ամբողջական կերպով, մասնավորապես ճիշտ է Կարմիր խաչի առաքելության ժամանումը թուրքերի հեռանալուց հետո, սակայն բազմաթիվ հարցեր առկալվում են, բաց են թողնվում:

Չենք կարծում, որ Հալիդե Էդիփը պարզապես կարող էր տեղյակ չլինել այս ամենից, և դաժանություններն ու դաժան հրամանները սովորն ու իրագործողը միայն զինվորական ղեկավարությունը լինելը՝ Ջեմալ փաշայի գլխավորությամբ, որովհետև հուշերը հրատարակելու պահին՝ 1926-ին Էդիփն առնվազն տեղյակ պետք է լինել եղածից, անցել էր մոտ յոթ-ութ տարի: Բացի այդ՝ մեր կողմից վերը բերված նրա գրքի վերջին մեջբերմանն անմիջապես հետևում է նրա հույժ հետաքրքիր պատումի հետևյալ շարունակությունը, որից երևում է, որ դեպքերի հետագա զարգացումներից նա մանրամասնորեն տեղյակ է եղել. «Ես նաև աղաչեցի նրանց փոխանցել հայ երեխաներին հայերին Կարմիր Խաչի միջոցով, իսկ *մուսուլման երեխաներին՝ Կարմիր Մահիկին՝ Կոստանդնուպոլիս*, երբ որ անհրաժեշտ պահը հասունանար: Նրանք խոստացան և պահեցին իրենց խոստումը: Նրանք ուղարկեցին միայթ Բրոուֆորդին՝ Կարմիր Խաչի անունից, երբ դաշնակիցները մտան: Սա իմ վերջին ծառայությունն էր Անթուրայում»<sup>62</sup>:

Անթուրայի մասին պատումով նա ավարտում է իր հուշը՝ նշելով, որ նրանք Սիրիայում մնացին մինչև 1919 թ. մարտի 4-ը<sup>63</sup>: Արդյո՞ք վերոբերյալ այս միտքը, «... *մուսուլման երեխաներին՝* [փոխանցել - Շ. Խ.] *Կարմիր Մահիկին՝ Կոստանդնուպոլիս»* չի առնչվում որբերի կողմից հաղորդված մի քանի տասնյակ երեխաների՝ Կ.Պոլիս տեղափոխման և գաղտնի վայրում պահվելու հանգամանքը կոծկելու համար, որոնց թվում կային նաև հայ երեխաներ և նրանցից մեկն էլ փախել էր այդ վայրից, ինչպես արդեն վերը հիշատակեցինք: Եվ եթե մարդասեր և անաչառ մտավորական ներկայացող Հալիդե Էդիփը ազնիվ կերպով որևէ առնչություն չունեի այդ ամենի հետ, ինչո՞ւ է սքողել այդպիսի հանգամանքները: Հնարավոր է, որ նա մտավախություն է ունեցել սեփական կյանքի համար. չէ որ նա այդպիսով փաստացի կպատմեր երևույթների մասին, որ բարոյական բազմաթիվ խնդիրներ կարծարծեին, և եթե պատմեր ամենը, կարող էր դիրք, իշխանություն կորցնել, ի վերջո՝ ռազմական գաղտնիքներ բացահայտելուն կարող էր նպաստել: Սելիմ Դերինգիլն իր հոդվածում մեջբերում է Հալիդե Էդիփի՝ Լիբանանի մուֆասսարիֆին՝ Իսմայիլ Հաքքի բեյին ուղղված նամակից մի հատված, որը ևս մեկ ապացույց է Հալիդե Էդիփի մեղսակցության: Այսպես. «Պատերազմական վերջին իրավիճակը մեր դեմ է գործում, քաղաքական ու մարդասիրական սխալ կլինի թողնել օտարականներին այսպիսի մի մեծ խումբ, որոնց ծնողները սպանվել են թուրքերի կողմից: Որբանոցը լքելը սխալ կլինի՝ նրանց թույլ տալով մեր դեմ օգտագործել դա՛ իբրև քաղաքական ու մարդասիրական ապացույց: Այդ պատճառով ես հակված եմ

61 Ալբոյաջյան, *Իսաչեղության ճամփաներով*, 50, հմմտ. Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 439: Ալբոյաջյանը նաև հաղորդում է, որ այդ խոսակցությունից հետո արաբ շերիֆի մարդիկ գալիս են ու բռնում-տանում զինվորական բժիշկ, դեղագործ Ռեզա բեյին:

62 Edib, *Memoirs of Halidé Edib*, 469:

63 Նույն տեղում, 471:

Անթուրյան Ստամբուլ տեղափոխելուն...: Երեխաներին կարելի է տեղափոխել Ստամբուլ հարաբերական անվտանգ կերպով, եթե դուք փոխադրամիջոց տրամադրեք անձնակազմի համար: Իսկ եթե Անթուրյան իսկապես պետք է լքվի, ես խնդրում եմ Ձեզ հեռանաք Լեռնային Լիբանանից»<sup>64</sup>:

Ի մտի ունենալով այս ամենը՝ Հալիդե Էդիփին կարող ենք վստահաբար կոչել հանցակից, քանի որ նա կարող էր սքողել, սակայն կարող էր խուսափել այդ ամենը մանիպուլյատիվ կերպով դրական ներկայացնելու ձգտումից, ինչը նա չի անում իր հուշերում, և առավել ևս՝ տասնամյակներ անց՝ մինչև կյանքի վերջը ևս չի խմբագրում ինքն իրեն որևէ կերպ՝ քաղաքականության և հասարակության մեջ ակտիվ լինելով մինչև մահը՝ 1964 թ. հունվարը: Այդու, նրա հուշերը և՛ աղբյուր են, և՛ աղբյուր չեն Անթուրյայի որբանոցի ու պետական իսլամացման ու թրքացման քաղաքականության ուղղությամբ՝ այնքանով, որքանով որ հարցերի ու խնդիրների մեծ բազմություն են առաջացնում և հակադրվում են որբերի հուշերին:

Հետաքրքիր են նաև որբերին համոզելու՝ կրոնի ուսուցչի կամ հոջայի ընտրած մեթոդները, որոնք գուցե թե՛ դարերի սպասարկման բովով էին անցել: Եվ այդ բառերը տրամագծորեն հակառակն էին այն բանի, ինչ մեզ փորձում է հաղորդել Հալիդե Էդիփը Ջենալ փաշայի շուրթերով: Այն, որ իսլամացումը հստակ հիմքերի վրա էր, կասկած չի առաջացնում, և այն, որ հայ երեխաներից ցանկանում էին թուրք ստանալ, արգելված էր հայերեն խոսելը, դա ևս կասկած չի առաջացնում: Սակայն հետաքրքիր է Հալիդե Էդիփի կողմից այդ փաստերը սքողելու դիվանագիտական քայլերը: Այսպես՝ Մելքոն Պետրոսյանը, ի տարբերություն, օրինակ՝ Գառնիկ Բանյանի, ունենալով թրքերենի որոշակի իմացություն, հիշում է մի քանի արտահայտություն, որով հայ երեխաներին կրոնափոխ անելու համար կիրառում էին ուսուցիչներն Անթուրյայի որբանոցում. «*Մեվկիլիլի եսիրլլար, սիզ վահիթընտա թուրք օղլու թուրք խոհնիզ, կեավուրլար սիզին տետեղէրինիզի զօրունան կեավուր էթօիլլեր. լազըմ տըր հաքք տինե, տեօյմէլխսինիզ*») թարգմանաբար – «Սիրելի ձագուկներս, դուք ժամանակին թուրքի զուսակ էիք, անհաւատները ձեր տետեղները զօրով կեավուր դարձուցին, դուք մայր հաւատքին պետք է դառնաք: *Ձեր կրօնքը հինցած է, ինչպէս կրակապաշտութիւնը, նոյնպէս ձեր Յիսուս մարգարէն հինցած է, շապիկ մը որ հիննայ կը նեռեն նորը կը հագնին*»<sup>65</sup>: Քրիստոնեության՝ հնացած կրոն լինելու, իսլամն իբրև նոր ու նորարար, նորոյթին ու մոդեռնին հակված, արևմտյան մտքին հարիր մտաշերտեր պարունակող գաղափարի հայրն ու շրջանի Օսմանյան կայսրությունում Ջիա Գյոքալին էր<sup>66</sup>, իսկ Հալիդե Էդիփը հանրահայտ կերպով այդ գաղափարական գծի հետևորդ էր հանդիսանում թե՛ փաստացիորեն, և թե՛ իր գրվածքներում: Այս կտրվածքով քրիստոնյաների

64 Մեջբերումն ըստ Մելիմ Դերինգիի անգլերեն թարգմանության, տե՛ս հետևյալ հոդվածի թ. 68 հղումը. Selim Deringil, “Your Religion is Worn and Outdated,” at <https://journals.openedition.org/eac/2090>, դիտվել է 20.08.2020:

65 Մելքոն Պետրոսյանի յուշերը, 12-13:

66 Այս մասին հակիրճ խոսել ենք մեր հետևյալ հոդվածում. Շուշան Խաչատրյան, «Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 125-126:

խլամացումը՝ միախառնված պանթուրքականության գաղափարախոսների մշակած մոտեցումների հետ, կիրառվում էր առաջին անգամ. առնվազն գաղափարախոսական գիծը նկատելի է: Ուստի ևս մեկ կետով կասկածելի է Հալիդե Էդիփի՝ վերը նշված այն ուղիղ մեջբերումը, որ ինքը դեմ էր երեխաներին իսլամացնելու գաղափարին, քանի որ հանրահայտ կերպով՝ քրիստոնյա կրոնական ինքնությունը խանգարիչ հանգամանք էր նկատվում պանթուրքիզմի հաստատման ճանապարհին: Այսինքն, հետագա ուսումնասիրությունների տեղիք տվող պետք է լինի նաև հետևյալ հարցադրումը. արդյոք Հալիդե Էդիփի գլխավորությամբ նրա անձնակազմի իրականացրած իսլամացումն Անթուրայի որբանոցում կատարվում էր հանուն կրոնի, ինչպես որ արվում էր Օսմանյան կայսրությունում նախորդ դարերում, թե՛ կրոն էր քաղաքական, քաղաքակրթական ու մշակութային, գաղափարախոսական հիմքեր, որ նկատելի է պանթուրքիստների գրվածներում ու գաղափարական գծում: Կարծում ենք, որ երկրորդն առաջինից կախում ունեցող շղթայի օղակ էր, քանի որ իսլամը միայն սինթեզի մեկ տարրն էր, առաջնային օղակը, սակայն ոչ վերջնականատակը. մղում կար ստեղծելու նոր մշակութային դաշտ, նոր մշակութային մարդ՝ պանթուրքիզմի բովանդակային ամրության տակ: Եվ այս իմաստով էին թրքացվում հայ երեխաները:

Պանթուրքիզմի կոնցեպտի մեջ տեղավորվող այս երևույթը բազմիցս ուսումնասիրվել է տարբեր առիթներով և տարբեր մասնագետների կողմից, սակայն հետագա լայն ընդգրկման, մանրամասն մշակման կարիք ունի այս՝ Անթուրայի որբանոցի ու հայ երեխաների թրքացման ենթատեքստում, ինչը նշագծելը այս հոդվածի նյութն է կազմում: Միաժամանակ, զուգահեռվող գծեր է անհրաժեշտ տանել նախորդ դարերում տեղի ունեցած, վերջերս կոնցեպտուալացված՝ Օսմանյան կայսրության ղեկավարության կողմից ուղղահայաց ենթակայությամբ իրականացվող՝ ոչ իսլամադավան և ոչ սուննի խմբերի սուննիականացման<sup>67</sup> երևույթի հետ, որի փայփայած արդյունքն Օսմանյան կայսրության կրոնական ու գաղափարական միատարրացումն էր: Ահա այս կոնտեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել՝ ի՞նչ ընդհանրություններ կան և ինչպիսի՞ տարբերություններ կան, և արդյո՞ք այդ երևույթը պանթուրքականության նախընթացն է եղել, և արդյո՞ք հայ քրիստոնյաների հանդեպ սերմանված-կուլտիվացված ցեղասպանական մտայնությունն արմատներ ունի նաև այս՝ համասունիթիզացման երևույթի մեջ:

Այսպիսով, վերը նշվածից հարցերն ու պարզաբանման կարոտ խնդիրները միայն ավելացան, ինչը և սույն հոդվածի նպատակն էր: Կրկնաբար չթվարկելով, թե ինչպիսի հետագա հետազոտական խնդիրներ առաջացան, կարևոր ենք համարում ընդգծել միայն, որ Անթուրայի հետ առնչվող յուրաքանչյուր անձ, տեղանուն, մասնագիտություն, յուրաքանչյուր գործողություն քննման, մանրամասն համադրման նյութ պետք է դարձնել: Կարելի է Անթուրայի որբանոցը կոչել փորձաքար ոչ միայն հայ երեխաների բռնի թրքացման հարցերը, այլև առհասարակ Հայոց ցեղասպանության բազմաթիվ կողմերը բացահայտելու ուղղությամբ, քանի որ այս

67 Սույն երևույթի մասին տե՛ս Derin Terzioğlu, “How to Conceptualize Ottoman Sunnitization: A Historiographical Discussion,” *Turcica* 44 (2012-2013): 301-338.

որբանոցի գոյությունն իսկ՝ մեթոդով, անձնակազմով, գաղափարաբանությամբ, իր մեջ միավորում է պանթուրքականության, ուժացման, ազգակերտման նոր մեթոդների, գիտական տեսությունների կիրառումը երիտթուրք պաշտոնեության ու տեսաբան-համակիրների կողմից: Անթուրայի որբանոցի սաների անունները, նրանց պատմությունները, որբանոցի անձնակազմը ևս բացահայտման տեղիք պետք է տան՝ հատկապես կենտրոնանալով սաների՝ դեռևս մեզ ոչ հայտնի հուշագրությունների կամ վկայությունների հավաքագրման և թուրք անձնակազմի կենսագրական ու գաղափարախոսական մանրամասնությունների վրա: Որոշակի կանոնակարգվածություն մտցնելու նպատակով էլ տրվում է սույն հոդվածին կից հավելվածը՝ համապատասխան աղյուսակներով:

Շշեղի է նաև, որ Անթուրայի որբանոցի գոյության խնդիրն ավելի լայն է ու տեղավորվում է ժամանակի նորաձև գիտական ու հակագիտական տեսությունների ծիրում: Հալիդե Էդիփի երկրորդ ամուսնու՝ Ադնան Ադըվարի քողարկվող ներգրավվածությունն Անթուրայի որբանոցի կայացման հարցում կլինի մեր հաջորդ ուսումնասիրության թեման՝ համապատասխան բավարար քանակությամբ աղբյուրների բացահայտումից հետո:



ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՂՅՈՒՍԱԿ Ա.

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ						
ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ + [ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ]					ՔԱՆԱԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՉ	Հալիդե եղիփ					1
ՏՆՕՐԵՆՆԵՐ	Նայ/հ/իդ բեյ [զինվորական]	Լյուլբլի բեյ [բժիշկ]	Ռեշադ բեյ	Աբրահամ Բեյ Ռոմաշվիլի		4
ՎԵՐԱԿԱՑՈՒՄ ՀՄԿԻՉՆԵՐ	Ֆա/ե/վզի բեյ [զինվորական, Ներքին գործերի մյուդիր]	Մուխթար բեյ				≈2 <sup>68</sup>
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ	Նեջմեդդին [Հոջա/մոլլա, կրոնի ուսուցիչ]	Նաբիհե հանըմ [թրքերենի ուսուցչուհի]	X [Քաղաքավարության կանոններ և բըժըշկագիտության ուսուցչուհի]	Այշե հանըմ [Թուրքիայի պտուղների գովքն անող և աշխարհագրություն դասավանդող ուսուցչուհի]	X [Արաբ երաժշտության ուսուցիչ]	≈5
ԴԵՂԱԳՈՐԾ/ԲԺԻՇԿ	Ռըզա բեյ [զինվորական կոչումով բժիշկ]	X <sup>69</sup>	X			≈1
ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ	X Արաբներ					X
ՀԱԾՎԱՊԱՀ	Մուհասաբաջի բեյ					≈1
ՄԱՌԱՆԱՊԵՏ	Շյուքրի					≈1
ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ	Էմինե հանըմ					≈1
ԱՏԱՂՁԱԳՈՐԾ	Ջոզեֆ (արաբ)					≈1
ՊԱՀԱԿԱԶՈՐ						≈30
ԸՆԴՀԱՆՈՒՐ						≈47

68 ≈ մոտավորապեսի նշանն օգտագործել ենք, քանի որ հստակ չէ այլք եղել են, թե՛ չեն եղել, կամ որբերի հուշերում նշվում է, որ եղել են, սակայն արդյոք քանիսն են եղել՝ մեզ համար դեռևս անհայտ է:

69 X նշումը ցույց է տալիս, որ տեքստում անկարկ կա նաև տվյալ պաշտոնը զբաղեցնող այլ անձանց մասին, սակայն որևէ անուն կամ հստակ քանակ հիշատակված չէ:

ԱՂՅՈՒՍԱԿ Բ.

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԴԱՍԱՑԱՆԿԸ	
ԹԻՎ	ԱՌԱՐԿԱ
1	Զինվորական քայք
2	Կրոն և կրոնի պատմություն
3	Թուրքերեն
4	Գրավարժություն
5	Երաժշտություն
6	Քաղաքավարության կանոններ
7	Բժշկագիտություն
8	Թվարանություն
9	Իրագիտություն կամ՝ «Զրույցներ Թուրքիայի վայրի և ընտանի բույսերի ու կենդանիների մասին» <sup>70</sup>
10	Աշխարհագրություն

ԱՂՅՈՒՍԱԿ Գ.

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԸ՝ ԸՍՏ Գ. ԲԱՆՅԱՆԻ, Հ. ԱԼԲՈՅԱԶՅԱՆԻ ԵՎ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ					
ՀԱՄԱ- ՐԱԿԱ- ԼՈՒՄ	ԱՎԱԶԱՆԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ/ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ	ՈՐԲԱ- ՆՈՑԱ- ՅԻՆ ԹԻՎԸ	ԹՐՔԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ	ԾՆԵԴԱՎԱՅՐԸ, ԾԱԳՈՒՄԸ	ԱՌԿԱ ՏԱՐԲԵՐ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Մելքոն Պետրոսյան (1905-)	8	Նեմիպ [=Նեջիփ/ Նեջեփ]	Սարըլար, Ամանոս	

70 Բանեան, Յուշեր, 135:

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԸ՝ ԸՍՏ Գ. ԲԱՆՅԱՆԻ, Հ. ԱԼԲՈՅԱԶՅԱՆԻ ԵՎ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ					
ՀԱՄԱ- ՐԱԿԱ- ԼՈՒՄ	ԱՎԱԶԱՆԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ/ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ	ՈՐԲԱ- ՆՈՑԱ- ՅԻՆ ԹԻՎԸ	ԹՐՔԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ	ԾՆԵԴԱԿԱՅԻՐԸ, ԾԱԳՈՒՄԸ	ԱՌԿԱ ՏԱՐԲԵՐ ՏՎՅԱԼՆԵՐ
2	Հարություն Ալբոյաջյան (1904-1994)	534/535 <sup>71</sup>	Ա. Սպեհ, Բ. Շյուքրյու	Ֆրնտրճագ	
3	Գառնիկ Բանյան (1910-1989)	545	Ահմեդ	Կյուրիս	
4	Թորոս Կարապետյան կամ մեծ Թորոս <sup>72</sup>		Էսվեր չավուշ/ քյույյուկ Էսվեր	Կյուրիսցի	Միակ սեփական ցանկությամբ թլփատվողը և 10-րդ դասարանի չավուշը:
5	Վարդան		Ջեմալ չավուշ/ քյույյուկ Ջեմալ	Կյուրիսցի	Մ. Պետրոսյանի դասարանի չավուշը
6	Հրանտ		Թալեաթ չավուշ/ քյույյուկ Թալեաթ		
7			քյույյուկ Հասան		
8	Հովսեփ		Մահմուդ չավուշ		շեփորահար
9			Իզգեթ չավուշ		
10			Շեքիր չավուշ		Հ. Ալբոյաջյանի դասարանի չավուշը
11	Նշան		Միդիաստ		

71 Հարություն Ալբոյաջյանի հուշերում նշվում է 534 (Ալբոյաջյան, *Խաչեղության ճամփաներով*, 40), իսկ Վերժինե Սվազյանի ժողովածուի մեջ՝ 535 (Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 439):

72 *Քյույյուկ Էսվերը* կամ *Էսվեր չավուշը* կամ՝ իրական անունը՝ *Թորոս Կարապետյան*, հիշատակվում է որբերի բոլոր երեք հուշերում: Ամենից մանրամասն նրա մասին պատմում է Հարություն Ալբոյաջյանը, քանի որ նրանք Անթուրայի որբանոցից հետո էլ՝ ընդհուպ Խորհրդային Հայաստան տեղափոխվելն ու ապրելը, միմյանց հետ կապը պահպանում են: Թորոս Կարապետյանը, ըստ ամենայնի, կարևորագույն կերպարներից էր Անթուրայի որբանոցում: Անձնական փոքրիկ հետաքննության արդյունքում կարողացանք գտնել նրա թոռների ու ծոռների անունները, և առաջիկայում հույս ունենք նրանց հետ կապ հաստատելով ավելի շատ մանրամասնություններ պարզել նրա անձի, հուշերի մասին և դրանով նաև կատարել Անթուրայի որբանոցի մասին նոր բացահայտումներ:

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՅ ԵՐԵՄԱՆԵՐԸ՝ ԸՍՏ Գ. ԲԱՆՅԱՆԻ, Հ. ԱԼԲՈՅԱԶՅԱՆԻ ԵՎ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ					
ՀԱՄԱ- ՐԱԿԱ- ԼՈՒՄ	ԱՎԱԶԱՆԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ/ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ	ՈՐԲԱ- ՆՈՑԱ- ՅԻՆ ԹԻՎԸ	ԹՐՔԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ	ԾՆԵԴԱՎԱՅՐԸ, ԾԱԳՈՒՄԸ	ԱՌԿԱ ՏԱՐԲԵՐ ՏՎՅԱԼՆԵՐ
12	Մանուել				Թուրքական դրոշը հայիոյող, առաջնորդ տղա:
13	Մկրտիչ				Թուրքական դրոշը հայիոյող, առաջնորդ տղա:
14	Գևորգ		Մուսամեդ	սսեցի	
15			Յուսուֆ	աղանացի	
16			Մուրադ		
17	Գրիգոր				Որբանոցի մատանապետը, Գառնիկ Բանյանի զարմիկը:
18	Միհրան				
19	Գալուստ				
20	Պողոս				
21	Հովհաննես				
22	Նշան				
23			Սարը	մարաշցի	Միակ մինչև վերջ խլամացածը
24			Այշա		Մ. Պետրոսյանի քույրը
25			Լուիֆիա		Մ. Պետրոսյանի քույրը
26	Աբրահամ				Ծեծից կուրացած

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԸ՝ ԸՍՏ Գ. ԲԱՆՅԱՆԻ, Հ. ԱԼԲՈՅԱԶՅԱՆԻ ԵՎ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ					
ՀԱՄԱ- ՐԱԿԱ- ԼՈՒՄ	ԱՎԱԶՄԵՒ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ/ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ	ՈՐԲԱ- ՆՈՑԱ- ՅԻՆ ԹԻՎԸ	ԹՐՔԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ	ԾՆԵԴԱԿԱՅԻՐԸ, ԾԱԳՈՒՄԸ	ԱՌԿԱ ՏԱՐԲԵՐ ՏՎՅԱԼՆԵՐ
27	Թորոս Ժամկոչյան կամ փոքր Թորոս		Ահմեդ <sup>73</sup>		
28	Արշակ	549	Ահմեդ <sup>74</sup>		
29	Հովհաննես Կարապողոսյան				
30-31	Թադևոս և Սեդրակ Խաչիսաչյաններ				
32	Մինաս				Քյալաջի
33			Մուսթաֆա		
34	Հրաչ				
35	Հովհաննես				
36	Հովսեփ				Հ. Ալբոյաջյանի ընկերը
37	Հակոբ				Հ. Ալբոյաջյանի եղբայրը
38	Կարապետ				Հ. Ալբոյաջյանի եղբայրը
39	Երվանդ				Հ. Ալբոյաջյանի եղբայրը
40	Հովսեփ				Մ. Պետրոսյանի ազգական

73 Ահմեդ անունով որբի հանդիպում ենք և՛ Գառնիկ Բանյանի, և՛ Հարություն Ալբոյաջյանի հուշերում. վերջինս նշում է նրա հայկական անունը, իսկ Գառնիկ Բանյանի մոտ գտնում ենք համանուն որբի երկու հիշատակում, որի թվահամարը մի տեղում նշվում է իբրև 549, մեկ այլ տեղում նշվում է հայկական անունը: Վստահ չլինելով՝ որ պարագայում է Բանյանը տվել թվահամարը և արդյոք խոսքը միևնույն անձի մասին է, նախընտրեցինք այս հարցը ծանոթագրել:

74 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՅ ԵՐԵՄԱՆԵՐԸ՝ ԸՍՏ Գ. ԲԱՆՅԱՆԻ, Հ. ԱԼԲՈՅԱԶՅԱՆԻ ԵՎ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ					
ՀԱՄԱ- ՐԱԿԱ- ԼՈՒՄ	ԱՎԱԶԱՆԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ/ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ	ՈՐԲԱ- ՆՈՑԱ- ՅԻՆ ԹԻՎԸ	ԹՐՔԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ	ԾՆԴԴԱՎԱՅՐԸ, ԾԱԳՈՒՄԸ	ԱՌԿԱ ՏԱՐԲԵՐ ՏՎՅԱԼՆԵՐ
41	Փանոս				Մ. Պետրոսյանի ազգական
42			Մեհմեդ	այնթապցի	Կ.Պոլսի մոտակայքում արգելափակվածներից մեկը, որ փախել էր այնտեղից:
43-45	Մելքոն Պետրոսյանի համագյուղացի երեք տղաներ:				
46	Գառնիկ Բանյանի բնորոշմամբ՝ «կրակուրոց տղա»՝ հակաթրքական ճառեր ասող:				
47-48	Հարություն Ալբոյաջյանի՝ երկու հորեղբոր տղաները, որոնք շուտ են մահանում:				
49	Ադանացի որբ Իզյաթ:				
50-52	Հազարապետ և բժիշկ Ռ-ըզա բեյին օգնող երեք հայ տղաներ, որոնցից մեկի անունը՝ Արիֆ:				
53	Ադանացի մի տղա, որին ծեծում են փախչելու փորձի համար, կաղ է մնում:				
54	Բոնի կրոնափոխությունից խեղաթուղած մի տղա, որը հոգեկան խնդիրներ է ստանում ու մահանում:				
55	Խաչ կրելու համար ծեծի ենթարկված երեխա՝ 8 տարեկան:				
[+50]	50 հոգի 1918 թ. գարնանը մի քանի ուսուցչի հետ տեղափոխվում են Կ.Պոլիս, արգելափակվում խիստ հսկողության տակ Պոլսի շրջաններից մեկում: Այստեղից փախչում է այնթապցի Մեհմեդը:				

**ԱՂՅՈՒՄԱԿ Գ.**

<p>Գառնիկ Բանյանի և նրա խմբի երեխաների ճանապարհային քարտեզը դեպի Անթուրա՝ սկսած դեպի Անթուրա տեղափոխման համար հավաքագրվելուց</p>
<p>Համա [հայ պատվելիի որբանոց] → Հոմա → Բաալբեկ → Բեյրութ → Անթուրայի որբանոց</p>

ԱՂՅՈՒՍԱԿ Ե.

<p>Հարություն Ալբոյաջյանի և նրա խմբի երեխաների ճանապարհային քարտեզը դեպի Անթուրա՝ սկսած դեպի Անթուրա տեղափոխման համար հավաքագրվելուց</p>
<p>Միսմիա → Դերա → Միսմիա → Դամասկոսի մզկիթ* → Ջունիե* → Անթուրայի որբանոց*</p> <p>*Ադնան բեյի ուղեկցությամբ</p>

ԱՂՅՈՒՍԱԿ Զ.

<p>Մելքոն Պետրոսյանի և նրա խմբի երեխաների ճանապարհային քարտեզը դեպի Անթուրա՝ սկսած դեպի Անթուրա տեղափոխման համար հավաքագրվելուց</p>
<p>Համա → Բաալբեկ → Ռայաք → Բեյրութ → Անթուրայի որբանոց</p>

*Shushan R. Khachatryan*  
PhD in History

**HALIDÉ EDIP AND THE TURKIFICATION OF THE ARMENIAN CHILDREN AT ANTOURA ORPHANAGE: IDENTIFICATION OF THE PROBLEM FIELD**

**SUMMARY**

*Key words:* Armenian Genocide, Antoura orphanage, Halidé Edip, Armenian orphans, Turkification policy, military, “new janissaries,” eugenics.

The article presents and analyses the Turkish intellectual Halidé Edip and her role in the state policy of Turkification of Armenian children at the Antoura orphanage during the Armenian Genocide. The article compares the three known memoirs of Armenian orphans from Antoura (Garnik Banyan, Harutyun Alboyajyan, and Melqon Petrosyan) to that of Halidé Edip, and reveals essential differences, manipulations, as well as disguised facts by Edip that are collected and

presented in the article. Thus, the research identifies the problem field relating to various aspects of Antoura orphanage by raising new questions, offering explanations and new approaches, as well as highlighting issues that need to be researched further.

Шушан Р. Хачатрян  
кандидат исторических наук

## ХАЛИДЕ ЭДИП И ТУРКИФИКАЦИЯ АРМЯНСКИХ ДЕТЕЙ В ПРИЮТЕ АНТУРЫ: ОБОЗНАЧЕНИЕ ПРОБЛЕМНОГО ПОЛЯ

### РЕЗЮМЕ

*Ключевые слова:* Геноцид армян, приют Антуры, Халиде Эдип, армянские сироты, политика тюркизации, военные, «новые янычары», евгеника.

Статья касается турецкой интеллектуалки Халиде Эдип и ее роли в государственной политике тюркизации армянских детей в приюте Антуры во время Геноцида армян. В статье сравниваются три известных мемуара армянских сирот-антуровцев (Гарник Банян, Арутюн Албояджян и Мелкон Петросян) с воспоминаниями Халиде Эдип и выявляются существенные различия, манипуляции, а также замаскированные факты, которые собраны и представлены в статье. Настоящее исследование затрагивает проблемную область, относящуюся к различным аспектам деятельности приюта Антуры, поднимая новые вопросы, предлагая объяснения и новые подходы, а также акцентируя внимание на вопросы, которые станут предметом дальнейших исследований.

### REFERENCES

- Alboyajyan, Harutyun. *Խաչերաթյան ճանիւղներով* [The Roads of Crusifixion]. Yerevan: VMV-Print Publishing House, 2005;
- Antonian, Aram. *Մեծ ոճիրը* [The Great Crime]. Yerevan: Arevik, 1990;
- Archbishop Zaven. *Պատրիարքական յուշերու. վկայագիրներ և վկայություններ* [My Patriarchal Memoirs: Documents and Testimonies]. Cairo: Nor Astgh, 1947;
- Banyan, Garnik. *Յուշեր մանկություն և որբություն* [Memoirs of childhood and orphanity]. Antelias-Lebanon: Armenian Catholicosate of the Great House of Cilicia, 1992;
- Gzoyan, Edita. «Երեխաների բռնի տեղափոխումը որպես ցեղասպանական գործողություն. ձևավորումից դեպի քրեականացում» [Forcible Child Transfer as a Genocidal Act: from Conceptualization to Criminalization]. *Ts'eghaspanagitakan handes* 8, no. 1 (2020): 99-118;
- Hovakimian (Arshakuni), Hovakim. *Պատմություն հայկական Պոնտոսի* [History of the Armenian Pontos]. Beirut: Mshak, 1967;
- Khachatryan, Shushan. «Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները:



Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ» [The Young Turks' Ideological Guidelines: Religion in Politics and Politics in Religion]. *Ts'eghaspanagitakan handes* 4, no. 1 (2016): 121-139;

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915 -1918թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4, no. 1 (2016): 25-43;

Melkonyan, Ruben. *Իսլամացված հայերի խնդիրների շուրջ* [On the Issues of Islamized Armenians]. Yerevan: Noravank, 2009;

Shakaryan, Artak. «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դեշիրմե [“Blood Tax” in the Ottoman Empire: Devshirme]. Yerevan: Author's edition, 2006;

Svazlyan, Verjine. *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերասպրողների վկայություններ*, Երկրորդ համալրված հրատարակություն [Armenian Genocide. Testimonies of the Eye-Witness Survivors. Second Revised Editon]. Yerevan: Gitut'yun, 2011.

Vvedenskii, Georgii. *Янычары*, [Yanissari]. St. Petersburg: Atlant, 2003;

*Մելգոն Պետրոսեանի յուշերը Եղեռնի օրերէն*, ամփոփուած Վարդիվառ Յովհաննէսեանի կողմէ [արևմտահայերեն թարգմանություն ֆրանսերենից] [*The Memoirs of Melgon Petrossian from the Days of Yeghern*, compiled by Vardivar Hovhannissian]. AGMI Collection, box 8, folder 148, no. 231.